

ՅԵՏԱԴԱՐՁ
ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԳԱՀՐԻՒՄ, 2011

ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ
ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԳԱՀԻՒԷ, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԽՕԱՆԿԱՆՆԵՐՈՒ ԱՅՍ ԺՈՂՈՎԱԾՈՆ	7
1. «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ» ԳԷՈՐԳ ԵԱԶԵՃԵԱՆ	11
2. ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԵՐԱՆ ԳՈՅՈՒՄՃԵԱՆ	23
3. ԺԱՄԱՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՏՈՐ ՄԸ ՎԱՐՊԻ ՔԷՇԻՇԵԱՆ	27
3. ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ»Ը ՊԷՊՕ ՄԻԱՌՆԵԱՆ	37
5. ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԹԷՔԷԵԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԳԾԻ ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ	41
6. «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ» - ՅՕԴՈՒԹՆԵՐ, ԵԼՈՅԹՆԵՐ, ՀԱՐՅԱԶՐՈՅՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՅ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ	47
6. ՏԱԳՆԱՊՈՂ ՀԱՅՈՒՆ ՄԱՏԵԱՆԸ՝ «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ» ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ	55

Ծանոթ.- Գրախօսականները դասաւորուած են ըստ իրենց հրապարակման ժամանակագրական կարգին:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՅՍ ԺՈՂՈՎԱԾՈՆ

Երբ ՅԵՏԱԴԱՐԶ ԱՆԴՐԱԴԱՐԶ հատորիս նիւթերը հաւաքելու ձեռնարկեցի, նպատակը տարիներու երկայնքին զանազան առիթներով թերթերու մէջ լոյս տեսած գրութիւններէս կամ հրապարակային ելոյթներէս ծաղկաքաղ մը մէկ կողքի տակ միատեղելն էր, զանոնք փրկելու համար մոռացութեան ճիրաններէն:

Հարկ է որ խոստովանիմ թէ հատորին գտած ընդունելութիւնը ինծի համար մեծ անակնկալ մըն էր, որ կը գլեր կ'անցնէր բոլոր ակնկալութիւնները, քանի որ ես զիս երբեք գրող մը չեմ նկատած:

Բազմատասնեակ տարիներու բազմավաստակ գրողներ, բազմաթիւ գիրքերու հեղինակներ, թերթերու խմբագիրներ եւ աշխատակիցներ, մտաւորականներ, հասարակական գործիչներ եւ այլ ընթերցողներ, որոնց հասաւ գիրքս, ջերմ գնահատանքի բանաւոր եւ գրաւոր արտայայտութիւններ ունեցան:

Երկարամեայ եւ մրցանակակիր գրող մը զիս «գրչեղբայր» հռչակեց: Ուրիշներ, որոնց հետ տասնամեակներու ծանօթութիւն ունէի, զարմանախառն հաճոյքով ինծի կըսէին թէ չէին գիտեր իմ «գրող» ըլլալս:

Այս բոլորէն ետք, զիս ամենէն աւելի զարմացնողը եղան տարբեր վայրերէ, զանազան թերթերու մէջ, ծանօթ մտաւորականներու կողմէ գրուած եօթը գրախօսականները, որոնցմէ ոմանք՝ բաւական ընդարձակ:

Ամէն անգամ որ նոր գրախօսական մը լոյս կը տեսնէր, կը փորձէի զայն ե-փոստով, հեռապատճէնով կամ աւանդական թղթատարով

հասցնել սակաւաթիւ գրասէր ծանօթներու: Սակայն միշտ կ'ունենայի ափսոսանքը թէ տուեալ գրախօսականը արգելափակուած պիտի մնար զայն լոյս ընծայող պարբերականին աշխարհագրական նեղ ծիրին մէջ եւ պիտի չհասներ հատորին աշխարհատարած ընթերցողներուն:

Այս վիճակը զիս հետզհետէ կը մղէր մտածելու, այս անգամ, ՅԵՏԱՂԱՐԶ ԱՆԴՐԱԴԱՐԶ-ին վերաբերեալ գրախօսականները գրքոյկի մը մէջ մէկտեղելու մասին, որպէսզի անոնք հասանելի ըլլան իրենց ծանօթանալ փափաքողներուն:

Սակայն զիս դաժանօրէն կը հալածէր սարսափի զգացումը: Արդարեւ, սահմանափակ փորձառութեամբ, չեմ յիշեր երբեւիցէ «գրախօսականներու հաւաքածոյ»ի մը հանդիպած ըլլալ:

Սարսափիս դրդապատճառը այն էր, որ նման գրքոյկի մը հրապարակումը կրնար, անսովոր թուելէ զատ, մեկնաբանուիլ որպէս **մեծամտութիւն** եւ **անհամեստութիւն**. երկու յատկանիշներ, որոնցմէ խորապէս կը խորշիմ: Վերջին հաշուով, խօսքը կը վերաբերի յօդուածներու եւ էլոյթներու «որբ» հատորի մը....:

Բայց այս բոլորին կողքին կար այն փորձութիւնը, թէ նման գրքոյկ մը հարեւանութեան պիտի բերէր գրախօսականներու հեղինակները եւ գրախօսականները միանգամընդմիշտ պիտի փրկուէին զիրենք լոյսին բերած թերթերուն «բանտախուց»երէն ու իրենց «ազգականներուն» հետ օթեւան պիտի գտնէին աւելի ազատ շրջապատի մը մէջ, ուր պիտի ապահովուէր իրենց անկաշկանդ եւ հեռահաս շրջազայութիւնը:

«Ազգականներու դրացնութիւն»ը առիթ պիտի ընծայէր որ գրախօսականները ընթերցողներուն միասնաբար ներկայացնէին իրենց հասարակաց գիծերը եւ հիմնաւորեալ տարբերութիւնները:

Ի վերջոյ, **փորձութիւնը** յաղթեց **սարսափին** եւ որոշեցի մէկ գրքոյկի մէջ համախմբել եօթը գրախօսականները:

Ջերմ խնդրանքս է որ ընթերցողները չյամենան գրախօսականներուն մէջ անձիս ուղղուած եւ երբեմն չափազանցութեան երթալու աստիճան շռայլուած դրուատիքներուն վրայ:

Կենսականը՝ ՅԵՏԱՂԱՐԶ ԱՆԴՐԱԴԱՐԶ հատորին մէջ արծարծուած գաղափարներուն մասին գրախօսողներուն ունեցած մօտեցումներն ու կատարած վերլուծումներն են, որոնք սերտօրէն առնչուած են մերօրեայ հայկական իրականութեան մէջ առկայ, մեր

հաւաքական մտածողութիւնը փոթորկող քրոնիկ հարցերուն եւ տազնապներուն:

Գրքոյկին լոյս ընծայումը առիթ մըն է նաեւ հրապարակային խոր շնորհակալութիւնս եւ երախտագիտութիւնս յայտնելու բոլոր գրախօսողներուն, որոնք ինքնական բարի եղած են մարդկութեան սեփականութիւնը եղող ամենաթանկագին բաներէն մին **Ժամանակը**, տրամադրելու եւ ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ-ը քննականօրէն կարդալով ու վերլուծելով՝ իրենց տեսակէտները թուղթին յանձնելու:

Նոյնպէս, այս առիթով ջերմ շնորհակալութեան խօսք ունիմ Տոքթ. Վաչէ Ղազարեանին՝ այս հրատարակութեան համար իր բերած խմբագրական աջակցութեան, ինչպէս նաեւ Մայրենի Հրատարակչատան միջոցով գրքոյկին նախատպագրական աշխատանքները խղճմտօրէն գլուխ հանելուն համար:



ԳԷՈՐԳ ԵԱԶՈՃԵԱՆ

«ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ»

Գրախօսուող ժողովածուն հեղինակին երկրորդ համահաւաքն է, որ լոյս կը տեսնէ յաջորդաբար: 2008-ին նոյն հեղինակէն նոյն քաղաքին մէջ հրատարակուած էր «Եգիպտահայ Հայեացքներ Պատմութեան, Քաղաքականութեան եւ Մշակութային Ժառանգութեան Մասին» արաբերէն ժողովածուն, զոր գրախօսած ենք «Ազգ»ի 22 Ապրիլ 2009ի թիւին մէջ (էջ 4): Եթէ նախորդն առաւելաբար կը վերաբերէր հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, Արցախեան հիմնահարցին, ՀՀ-ի եւ առհասարակ հայութեան՝ Արաբական աշխարհի հետ յարաբերություններուն ու անոնց առնչակից հարցերուն, սոյն ժողովածուին նիւթերը հիմնականին մէջ հայկական են, եւ ազգայինէն կը սլաքուին դէպի համամարդկայինը:

Քանի մը խօսքով վերյիշեցնենք հեղինակին ինքնութիւնը: Պերճ Թէրզեանը Եգիպտոսի հայկական գաղութի մերօրեայ նահապետներէն է: Ան կարելորդ պաշտօններ զբաղեցուցած է գաղութի ազգային մարմիններուն մէջ՝ Թեմական խորհուրդ, ՀԲԸՄ-ի զանազան ղեկավար մարմիններ, Հայ Ազգային Հիմնադրամ եւ այլն: Ներկայիս ան խորհրդատուն է «Արեգ» արաբերէն ամսաթերթին:

Գրախօսուող հատորը, զոր հեղինակը ձօնած է իր «կեանքի անգուգական ընկերուիին՝ Սեդային», «յօդուածներու, ելոյթներու, հարցազրոյցներու եւ ուսումնասիրութեան ժողովածոյ» մըն է, ինչպէս այդ մասին կ'ազդարարեն Ա. կողքն ու անուանաթերթը:

Գիրքը կը սկսի բովանդակութեան ցանկով, որուն կը յաջորդէ ՀՀԳԱԱ Պատմութեան Հիմնարկի տնօրէն, փրոֆ. Աշոտ Մելքոնեանի ստորագրած «Առաջաբան»ը: Դոկտ. Մելքոնեանը կը կատարէ գիրքին ընդհանուր գնահատութիւնը: Ան «կենսական անհրաժեշտութիւն» կը յայտարարէ «հայ մամուլի ամբողջական համահաւաք ստեղծելու հարցը»: Կը նշէ «Արեւ» օրաթերթի եւ Թէրզեան ընտանիքի միջեւ ամենասերտ կապը ու կանդրադառնայ ժողովածուին բովանդակած

նիւթերու կարեւորութեան՝ յատկապէս շեշտելով, թէ «գաղութահայ դպրոցների խնդիրը Պ. Թերզեանի հրապարակումների կենտրոնական թեմաներից է»: Դոկտ. Մելքոնեան համոզում կը յայտնէ, թէ «ընթերցողների մի մասը հեղինակի առաջադրած մի շարք հարցադրումների կապակցութեամբ չի կիսելու նրա մօտեցումները», նշելով այդ հարցերէն ոմանք՝ սփիւոքահայ կուսակցութեանց դերը, Հայաստանի առաջին Հանրապետութիւնը, կաթողիկոսական ու պատրիարքական աթոռներու միջեւ փոխարարերութիւնները... Մեր կարծիքով, այս վերապահութիւնը խոցելի է, եթէ նկատի ունենանք, որ այս հարցերը, մանաւանդ Հայ եկեղեցւոյ պառակտման ձգած յոյժ ցաւալի հետեւանքները հասկնալու համար պէտք է երկար ժամանակ ապրած ըլլալ Սփիւոքի, մասնաւորաբար միջինարեւելեան երկիրներու պայմաններուն մէջ: Մելքոնեանը համոզուած է, թէ այս եւ նման ժողովածուները կօգնեն «1980-ական թթ. (կ'աւելցնէինք՝ «նաեւ ատկէ առաջ ու առ այսօր», - Գ. Ե.) Սփիւոքում տիրող հասարակական-քաղաքական մթնոլորտը ճիշտ պատկերացնելու, մեր անցած պատմական ուղին գնահատելու եւ թոյլ տուած սխալներից խուսափելու համար»:

Կը հետեւի հեղինակին ստորագրած «Մուտք»ը, ուր ան տեղեկութիւններ կու տայ ժողովածուի բաժիններուն մասին, իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնելով գիրքի էլեկտրոնային շարուածքն ու պատշաճ ձեւաւորումը իրականացուցած, ինչպէս նաեւ խմբագրման սատարած դոկտ. Վաչէ Ղազարեանին (ԱՄՆ):

Առաջին ու ծաւալով մեծագոյն բաժինը հեղինակին ստորագրած յօդուածներն են (էջ 21-209): Այստեղ մէկտեղուած է 66 հրապարակում՝ ջախջախիչ մեծամասնութեամբ լոյս տեսած Գահիրէի «Արեւ» օրաթերթին մէջ: Անոնք թէեւ կընդգրկեն աւելի քան քառորդ դարու ժամանակաշրջան մը (26 Յուլիս 1977 - 7 Սեպտեմբեր 2005), սակայն մեծ մասամբ գրուած ու տպագրուած են 1984-1987 քառամեակին: 1988-ի վերջէն մինչեւ 1998-ի աշունը, գրեթէ տասնամեակ մը, Թերզեանի հայերէն հրապարակումները անհետացած կ'երեւին:

Ինչ ազգային նիւթ ըսես, որ չէ շօշափուած այս յօդուածներուն մէջ. հայոց լեզուն եւ գաղութներուն մէջ անոր աղէտալի նահանջը, հայ դպրոցն ու անոր անհաշիւ հարցերը, Հայ եկեղեցին եւ էջմիածին-Անթիլիաս անբնական յարաբերութիւնները, Հայրենիք-Սփիւոք կապերը, անոնց մէջ տեղ գտած թերիներն ու այդ կապերու խանգարիչներուն մերկացումը, Խորհրդային Հայաստանէն ու հայրենա-

մերձ գաղութներէն, ընդ որս՝ Եգիպտոսէն արտագաղթը, եգիպտահայութեան կազմակերպական խնդիրները, սփիւռքահայ մամուլին դիմագրաւած մարտահրաւերներն ու անոր առաքելութիւնը, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, հայոց բռնախլուած իրաւունքներուն վերատիրացման համազգային պայքարը, ազգային համախմբութեան հիմնախնդիրը եւ այլն եւ այլն: Թերզեան երեք հրապարակում «նուիրած է» ոչ-անյայտ միւնիխական գործիչ Էտուարտ (Էտիկ) Յովհաննիսեանին, որ բաւական աշխուժութեամբ կ'աշխատէր քանդել Հայաստան-Սփիւռք կամուրջը (սոյն գործիչին գործունէութիւնը մերկացնող հրապարակումներով նոյն տարիներուն հանդէս եկած ենք նաեւ մենք. տե՛ս, օրինակ, մեր 23 Յուլիս եւ 22 Հոկտեմբեր 1983-ի յօդուածները Պէյրութի «Զարթօնք» օրաթերթի «Փորթուզալեան ակումբի էջ»-ին մէջ՝ Գ. Գ. Գ. ստորագրութեամբ):

Պերձ Թերզեան չի բաւականանար զուտ ազգային պարունակով, այլ՝ անկէ պարբերաբար անցումներ կը կատարէ դէպի համամարդկային խնդիրներ եւ արդար դատեր, ինչպէս պաղեստինցի արաբ ժողովուրդի ազատագրական պայքարը, Ափրիկէի սովեալներուն օժանդակելու հարցը, Արժանթինի բռնատէր զինուորական իշխանաւորներու դատավարութիւնը եւ այլն:

Ժողովածուին երկրորդ բաժինը «Ելոյթներ» վերնագիրին տակ (էջ 211-246) մէկտեղած է հայկական տարբեր ձեռնարկներու (չորսն ուղղակիօրէն կ'առնչուին ՀԲԸՄ-ին) առթիւ Պերձ Թերզեանի ելոյթներէն եօթը, որոնցմէ երեքը լոյս տեսած են եգիպտահայ մամուլին մէջ: Ելոյթներէն մէկն արտասանուած է եգիպտահայ համբաւաւոր գոհարավաճառ Օննիկ Ալեքսանեանի (օտար շրջանակներուն ծանօթ էր «Օննիկ օֆ Գէիթօ» անունով) մեծարման հանդիսութեան: Իր այս սիրելի բարեկամին մահուան առթիւ հեղինակը ստորագրած է այս ժողովածուին մէջ տեղ գտած յօդուածներուն վերջինը («Արեւ», 7 Սեպտեմբեր 2005 - էջ 206-209):

«Հարցազրոյցներ» բաժինին մէջ (էջ 247-282) տեղ գտած է ընդամենը 4 հարցազրոյց, որոնցմէ մէկը հեղինակը ինք է կատարած Եգիպտոս այցով գտնուող հայրենի գրող Սերօ Խանգատեանի հետ, իսկ միւսները կատարուած են իր հետ եւ լոյս տեսած ՌԱԿ-ի «Զարթօնք» օրաթերթին եւ ՀԲԸՄ-ի «Խօսնակ» (Պէյրութ) ու «Յուշարար-Միութիւն» (Նիւ Եորք) պաշտօնաթերթերուն մէջ: Վերջիններուն մէջ Թերզեանը կարելոր տեղեկութիւններ կը հաղորդէ եգիպտահայ գաղութի

վիճակին մասին՝ միշտ շեշտելով գաղութին «ծերացումը»՝ ի հետեւանս երիտասարդներու արտագաղթին եւ ծնունդներու սահմանափակ թիւին:

Մեր կարծիքով, ժողովածուին զարդը կը կազմէ չորրորդ բաժինը (էջ 283-296), որ «Եգիպտահայ Վարժարանները Այսօր» վերնագրուած ուսումնասիրութիւնն է: Ընդառաջելով ՀՀ-ի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան Սփիւռքի Հետ Կապերի Բաժինի տարածած յայտարարութեան, Պերճ Թերզեանը կատարած է գիտնականի վայել յոյժ բժախնդիր ուսումնասիրութիւն եգիպտահայ դպրոցներու արդի վիճակին մասին: Վիճակագրական տուեալներով չափազանց հարուստ այս ուսումնասիրութիւնը անշրջանցելի սկզբնաղբիւր մըն է եգիպտահայ դպրոցի պատմութիւնն ուսումնասիրողներուն, ինչպէս նաեւ առհասարակ հայ դպրոցի պատմութեամբ հետաքրքրուողներուն համար: Նկատի ունենալով եգիպտահայ կրթական համակարգի նման հարցերու առկայութիւնը նաեւ միւս գաղութներուն մէջ, հեղինակը կառաջարկէ լուծումը փնտռել «համահայկական մակարդակով»:

Այսքանով չաւարտիր հատորը: Ան ունի նաեւ հինգերորդ բաժին մը՝ «Յաւելուած» վերնագիրին տակ: Այստեղ յաւելեալ տեղեկութիւններ կը տրուին յօդուածներու հեղինակման հանգամանքներուն, արձագանգներուն եւ հետեւանքներուն մասին: Պարզ կը դառնայ, որ յատկապէս քննադատական հրապարակումներուն «շնորհիւ», հեղինակին բարեւ տուողներուն թիւը պակսած է: Սա շատ բնական է հայկական միջավայրին մէջ եւ կը վկայէ այդ քննադատութեանց ... դիպուկութեան ու ճշմարտացիութեան մասին: Մարդկային առաքինութիւն է հայելիի մէջ նայիլը, սեփական տգեղութիւնները տեսնելն ու մաքրուիլը, որ շատերու տրուած չէ դժբախտաբար: Իսկ իսկական մամուլի առաքելութիւններէն մէկն ալ կեանքի հարազատ հայելին ըլլալու պարտաւորութիւնն է, որ նոյնպէս ոչ միշտ կիրականանայ՝ դարձեալ դժբախտաբար:

Ստորեւ ուշագրաւ տեղեկութիւններ ու դիտարկումներ հրապարակագիրի գրաւոր եւ բանաւոր ելոյթներէն՝ ըստ մարզերու:

1 - Լեզու եւ կրթութիւն

- «Մեր (Եգիպտոսի հայկական,- Գ. Ե.) վարժարաններն ունին պետութենէն վաւերացուած ներքին կանոնագիր, ըստ որուն, այն

աշակերտը, որ հայերեն լեզուին մեջ չի յաջողիր, կարգ փոխելու իրաւունք չունի: Կասկածելի է, որ այս պայմանը վերջին 10-15 տարիներու ընթացքին երբեւիցէ գործադրուած ըլլայ» («Կոտտացող Վերքը», 27 Սեպտեմբեր 1977): Այսինքն 1960-ականներու կեսերէն սկսած է հայոց լեզուի թերագնահատումը եզիպտահայ կրթական համակարգին մէջ:

- «Մենք զմեզ կը համոզենք թէ ցորքան որակաւոր ուսուցիչներ չենք գտներ, գործը քալեցնելու համար անորակներ պէտք է պաշտօնի կոչենք: Իսկ անորակ տարրերով խճողուած վարժարաններէն, այս անգամ, բացառիկ արդիւնքներ կակնկալենք» («Խաղաղութիւն Եւ Համերաշխութիւն», 2 Յունիս 1984): Նոյն միտքը շեշտուած է նաեւ «Ուսումնական Ամավերջի Խոհեր» յօդուածին մէջ (7 Յունիս 1985):

- «Մեր ցաւը այն է, որ մեր մէջ ազգային զգացողութիւնը այնքան մը բթացած է, որ հարկ եղած լրջութեամբ չենք մտահոգուած հայ վարժարանին գոյութեան իմաստը արդարացնող ՀԱՅ ՄԱՐԴ պատրաստելու էական առաջադրութեամբ» («Երեւոյթ՝ վ, Թէ՞ Էութեամբ Հայեր», 27 Հոկտեմբեր 1984): Հեղինակը այսպիսի մօտեցման բնական արդիւնքը կը նկատէ այն, որ հայկական վարժարաններուն շրջանաւարտները «ԵՐԵՒՈՅԹՈՎ հայ ըլլան եւ ոչ թէ՝ ԷՈՒԹԵԱՄԲ» (նոյնը):

- «Մեր մէջ տիրող շուկայիկ հոգեբանութեան հետեւանքով, մեր լեզուին կարելորութեան զգացողութիւնը չափազանց տկարացած է: Վերջապէս չէ՞ որ հայերէն լեզուն փոր չի կշտացներ...:» («Թուրքին Գործակից», 18 Մայիս 1985):

- «Մեծ չէ թիւը մեր վարժարաններու նոր սերունդի շրջանաւարտներուն, որոնք հայերէն թերթի մը մէկ պարբերութիւնը կարենան անսխալ կարդալ, իսկ եթէ կարդան գոնէ իրենց կարդացածը կարենան լրիւ հասկնալ» («Արեւ»ին», 8 Յունիս 1985):

ՀԲՀՄ-ի 100-ամեակին առթիւ Գահիրէի մէջ կազմակերպուած կեդրոնական հանդիսութեան ժամանակ իր արտասանած խօսքին մէջ, Պերճ Թերզեան «մեր առջեւ ծառացող» երկու հիմնահարցերը կը յայտարարէ Հայրենիքի եւ հայրենամերձ գաղութներու պարպումն ու լեզուի նահանջին ներկայացուցած վտանգը («Տեղեկատու ՀԲՀՄ-ի», Գահիրէ, Յուլիս 2006): Պիտի ուզէինք, որ ելոյթ ունեցողը Միութեան զանազան նուաճումներուն եւ ծրագիրներուն մասին խօսելով, այդ հանդիսութեան մէջ բարձրաձայնէր նաեւ ... Մելգոնեան Կրթական

Հաստատության փակման՝ ՀԲԸՄ-ի նման միության համար պատիւ չբերող փաստը:

- «... արեւմտահայերէնը ... դժբաղդաբար հաստատ քայլերով կ'ընթանայ դէպի անէացում»: Չափազանց տխուր, բայց փաստացի հաստատում մը՝ դժբախտաբար...

2 - Չափանիշներու խախտում եւ հասարակական բարոյականութիւն

- «Մեր ազգային կեանքէն ներս դրամին սէրը կարգ մը մարդիկ իջեցուցած է ստրկամտութեան աստիճանին», «... անտեղի պատիւներու շռայլումով կոտնակոխուին բուն եւ իսկական արժէքները, եւ պատրաստուած ու լուրջ մարդիկ <...> տակաւ կը հեռանան եւ ասպարէզը առաւել եւս ազատ կը մնայ բանգէտներու առջեւ» («Դրամին Շխշխկոցը», 5 Հոկտեմբեր 1977): Աւելի քան երեսնամեակ մը յետոյ, մեր օրերուն, այս հիւանդութիւնը կարծէք անբուժելի համաճարակի է վերածուած:

- «Երբ գնահատանքը կը տրուի անժամանակ կերպով եւ անյարմար անձի, հանրային կարծիքը կընդվզի ու կը դժգոհի» («Արժեչափ», 10 Մարտ 1984):

- «... աւելի գիտակից անձը իրեն ուղղուած անտեղի եւ ուռուցիկ գովասանքը համազօր կը նկատէ հեզնանքի» («Գովաբանութիւն Եւ Ինքնագոհութիւն», 31 Յունուար 1987):

- «Արդարեւ, հասարակական կեանքի մէջ հակառակորդ կրնայ չունենալ միայն անտարբեր, անսկզբունք եւ ամէնուն հաճելի թուիլ փորձող անձ մը, որ պատրաստ է հաճոյակատարութիւններ ընելու նոյնիսկ ի գին ազգային կենսական շահերու եւ դիրքաւորումներու» («Արթօ Պըլըքտանեան Շքանշանակիրը», 28 Նոյեմբեր 1988):

- «Ողբերգութիւնը կը սկսի այն ժամանակ, երբ յարգանքը կը շռայլուի յարգելի տուեալներու բացակայութեան» («Յաւելուած»):

- «Երբ կանոնազանցութիւն մը, առանց որ ոեւէ մէկը բողոքէ, քանիցս կրկնուի, սովորութեան կարգով բնական երեւոյթ կը դառնայ: Այնուհետեւ, երբ անձ մը «համարձակի» ակնարկութիւն ընել, որքան ալ տեղին ըլլայ այդ ակնարկութիւնը, ան ենթակայ կըլլայ հակառակորդ շահելու» («Յաւելուած», էջ 315):

3 - Մտաւորականներու արհամարհումը.

- «Մեր բուն ցաւը պէտք է փնտռել գաղութին եւ անոր կազմակեր-

պութիւններուն «ապամտաւորականացում»ին մէջ, եթէ կարելի է նման եզր մը գործածել»: Թերզեան հրապարակումը կ'աւարտէ սեփական գրիչէն ելած թելաւոր խօսքով. «Ինծի ըսէ ո՛վ է գաղութիդ որոշում առնող տարրը, քեզի ըսեմ թէ ինչպիսի գաղութի մը մաս կը կազմես դուն» («Որոշում Առնող Տարրը», 24 Մարտ 1984):

4 - Հայութեան անկազմակերպ վիճակը

- «Ինչպէ՞ս կրնանք համոզել օտարները մեր կարելիութիւններուն մասին, երբ մենք իսկ չենք գիտեր թէ ի՞նչ է սփիւռքի մեր մտաւորական, տնտեսական եւ կազմակերպչական կարողականութեան (փոթենշըլ) պատկերը» (««Ով է Նա»ի Բ. Հրատարակութիւնը», 19 Մայիս 1984):

- Հեղինակը «հայկական հիւանդութիւն» կը յայտարարէ իրաւանման գործունէութիւն տանելու կոչուած զանազան մարմիններու առատութիւնը նոյն վայրին մէջ, աւելցնելով. «Գոյութիւն ունեցող կազմակերպութիւնները կու գան հինէն եւ հեռատեսութիւնը կամ քաջութիւնը չունինք անոնցմէ ոմանք լուծարելու կամ նոյնանպատակ այլ կազմակերպութեան մը մէջ ձուլելու» («Ինքնամփոփումի Անհրաժեշտութիւն», 15 Դեկտեմբեր 1984):

5 - Հայրենիք

- Հայոց հայրենիքը «ներկայի ու ապագայի միակ յուսալից կռուանն եւ յուսատու ապաւէնն» է («Ապրիլ», 14 Ապրիլ 1984), «... սփիւռքի ազգային պատկանելիութեան զգացումը պահպանելու համար փրկութեան միակ լաստը մեր հայրենիքն է» («Կիլիկեան Ցաւեր», 18 Օգոստոս 1984): Ուրիշ հրապարակման մը մէջ, քննադատելով ՀՅԴ-ի պաշտօնաթերթ «Յուսաբեր»ի մէկ հրապարակումը, ուր գաղութներու շարքին կը յիշատակուէր «Հայաստան»ը, Թերզեան նման երեւոյթը «աններելի մեղանչումի» հաւասար կը նկատէ («Յաւալի Բայց Իրաւ», 28 Մայիս 1985):

6 - Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններ

- «Որքան զօրանայ սփիւռք-հայրենիք փոխյարաբերութիւնը, այնքան կրնայ երկարաձգուիլ սփիւռքի գոյութիւնը որպէս ազգային պատկանելիութեան զգացում ունեցող հաւաքականութիւն» («Կիլիկեան Ցաւեր», 18 Օգոստոս 1984):

- «Գաղութները միացնողը, ընդհանուր յայտարարի բերողը միայն Հայաստանը կրնայ ըլլալ» («Հանդիպում Մը Պերճ Թերզեանի Հետ», «Խօսնակ», Յունիս 2000):

- «... մեր հայրենիքին ամենէն մեծ եւ անչափելի վնասը պիտի հասնի, եթէ այսօրուան երիտասարդութիւնը ՎԱՂԸ կապ չունենայ հայրենիքին հետ եւ խզուի անկէ»:

7 - Հայ Եկեղեցի, անոր պառակտուած վիճակն ու բարեկարգութիւնը

- Հեղինակը Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութիւնը կը նկատէ «բարդ եւ փշոտ հարց» («Հայ Եկեղեցւոյ Բարեկարգութեան Հարցը», 27 Օգոստոս 1984): Թերզեան համոզում կը յայտնէ, որ եթէ Հայ Եկեղեցւոյ կանոնադրութիւն մը ըլլար, «հաւանաբար մեր Եկեղեցիին խնայուէին այսօրուան իր անցուցած տագնապներէն շատերը» (նոյնը): Այդ տագնապներէն մէկն էր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մէջ շահատակութիւնները, որոնց կը վերաբերին քանի մը հրապարակումներ: Քանի մը հատն ալ կը վերաբերին Հայ Եկեղեցւոյ պառակտման դառն իրականութեան ու անկէ ծագող եւ հայութիւնը ծուստող հարցերուն:

- Պ. Թերզեան «այպանելի» կը յայտարարէ «Դաշնակցութիւնը, որուն գերագոյն ղեկավարութիւնը տասնամեակներէ ի վեր կը բաժնէ մեր ժողովուրդը եւ կարգելակէ մեր եկեղեցւոյ միութեան ճիգերը» («Յաւելում»):

8 - Հայկական մամուլ

- «Հայ թերթին հրատարակութեան գործը, ամէն բանէ առաջ, հաւատքի գործ մըն է: Հայ թերթին գոյութիւնը հոգեկան պահանջի մը արդիւնք է: Եւ վերջապէս, հայ թերթը հայ անհատներուն եւ հայ հաւաքականութիւններուն ազգային ինքնութիւնը կամրջող կարելոր ազդակ մըն է» («Արեւ»ին», 8 Յունիս 1985):

9 - Եգիպտահայ գաղութին «ծերացում»ը

- «Կը զգայ մահուան մօտիկութիւնը, բայց չի գիտեր թէ ե՞րբ պիտի ժամանէ ան»: Հեղինակը կը պահանջէ այս հոգեբանութիւնը «արմատախիլ ընել եւ անխնայօրէն հալածել» («Վաղուան Վախը», 12 Ապրիլ 1986): Այդուհանդերձ, քանի մը ամիս յետոյ լոյս տեսած յօդուածի մը մէջ, կանխատեսելով նման վախճանը, Թերզեան կ'առաջարկէ Եգիպ-

տոսի հողին մեջ ննջող հայ մեծերուն աճիւնները Հայրենիք տեղափոխել՝ նման քայլը «խելացի» նկատելով («Սիրանոյշ Եւ... Զակազիկ», 30 Օգոստոս 1986):

Այս ժողովածուի նիւթերուն մեջ ընթերցողը կը գտնէ քիչ յայտնի կամ անյայտ տեղեկութիւններ եգիպտահայ գաղութին մասին: Օրինակ, «եգիպտահայ թեմը կը ներկայանայ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ համար անջատ Առաջնորդարաններով, որոնք Առաջնորդ Սրբազանին անձով կը վերածուին մէկ թեմի»: Թերզեանը վերջին տարիներու «կարեւոր իրագործում»ներու շարքին կը դասէ «եգիպտահայ մամուլի ամբողջական հաւաքածոներուն մանրաժապաւեններու վրայ նկարահանումները»: Յաւով կ'իմանանք, թէ «Հելիոպոլսոյ մեջ գործող Անարատ Յղութեան Հայ Քոյրերու վարժարանի <...> բազմահազար աշակերտութեան մեջ հայեր գրեթէ գոյութիւն չունին եւ ուր հայկական որեւէ նիւթ չի դասաւանդուիր», «Օտար վարժարան յաճախողներուն ընդհանուր թիւը կը գնահատուի 45-էն 60 աշակերտի միջեւ, այսինքն հայկական վարժարան յաճախողներու թիւին շուրջ 30 տոկոսը» («Եգիպտահայ Վարժարանները Այսօր»): Վկայակոչելով յետագային դաշնակցական գործիչ իր մէկ նախկին դասընկերոջ խօսքը, Թերզեան կը փոխանցէ, թէ 1995-1999-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Սարգիսեանը ԱՄՆ-ի անթիլիասական Արեւելեան թեմի Առաջնորդ եղած ժամանակ «բոլոր հրահանգները կը ստանար Նիւ Եորքի կուսակցական մարմինէն» («Յաւելուած»):

Ժողովածուին մեջ տեղ գտած հրապարակումները ատաղձ են սփիւռքահայութեան, մասնաւորաբար՝ Եգիպտոսի հայկական գաղութին ոչ-վաղ անցեալը, ներկան եւ մօտակայ գալիքն ուսումնասիրողներուն համար:

Որոշ պարագաներու, հրապարակագիրին կանխատեսումները չեն իրականացած, երբեմն՝ նոյնիսկ հակառակ արդիւնքն ունեցած են: Օրինակ, 1984-ի կէսին ան կը գրէր. «Չենք գիտեր որ Սովետ Միութենէն անջատուած Հայաստանի մը զինուորական ուժը ինչ կրնայ ըլլալ, բայց հաստատ կրնանք ըսել որ այդ ուժը չի բաւեր նոյնիսկ իր փոքր դրացիներէն՝ Վրաստանէն եւ Ատրպէյճանէն, ետ առնելու Ախալքալաքը կամ Ղարաբաղը» («Անկախութեան Պահանջը», 9 Յունիս 1984 - էջ 71):

Ժողովածուին մեջ քննադատելիներ կա՞ն: Անշո՛ւշտ: Բայց անոնք

կը նսեմանան այն բոլոր դրականներուն դիմաց, որոնցմով հարուստ է այս համահաւաքը:

Առաջինը կուզէինք նշել գիրքին խորագիրը: «Դարձ» բառին կրկնութիւնը անտեղի կը գտնենք, քանի որ «անդրադարձ»-ն ինքնին յետադարձութիւն կենթադրէ: Կարելի էր պարզապէս խորագրել «Յետադարձ Հայեացք»:

Մուտքագրման թերիները աննշան են, լեզուականները՝ քիչ: Այդուհանդերձ, կը փափաքինք նշել վերջիններէն ոմանք, քանի որ բաւական տարածուած են արեւմտահայ միջավայրին մէջ.

- Արեւելահայերէնէն արեւմտահայերէնին թափանցած եւ շատ ընդհանրացած սխալ մըն է «խիստ» բառին գործածութիւնը «շատ» իմաստով:

- Վենետիկի Մխիթարեաններու դպրոցին (ցաւօք՝ արդէն երբեմնի) անունը պէտք է գրել Մուրատ-Ռափայէլեան ձեւով՝ երկու անունները գծիկով մը միացուած, քանի որ ան երկու կրթարաններու՝ Փարիզի Մուրատեան եւ Վենետիկի Ռափայէլեան դպրոցներուն միաւորումով երեւան եկած դպրոց մըն է: Մուրատ Ռափայէլեան ձեւը (էջ 179՝ 2 տեղ) այն տպաւորութիւնը կը թողու, թէ նման անուն-մականունով անձ մը գոյութիւն ունեցած է՝ առնչուած այս դպրոցին:

- Սխալ է «Իրանի Հայոց Առաջնորդ» որակել Արտակ Արք. Մանուկեանը (էջ 192): Իրանի մէջ ունինք երեք թեմ՝ Ատրպատականի, Թեհրանի եւ Իրանա-Հնդկաստանի՝ համապատասխանաբար Դարեժ (Թաւրիզ), Թեհրան եւ Նոր Զուղա (Սպահան) առաջնորդանիստ քաղաքներով: Արտակ Սրբազանը երկրորդ՝ ամենահայաշատ թեմի երկարամեայ Առաջնորդը եղաւ:

- Սխալ է «իւր մէջ կը ներառնէ» բառակապակցութիւնը («Հանդիպում Սը Պերճ Թէրզեանի Հետ», «Խօսնակ», Յունիս 2000 - էջ 267): «Ներառնել»ն ինքնին կենթադրէ «ներս»՝ այսինքն՝ «մէջ» հասկացութիւնը, հետեւաբար, «իւր մէջ»ն աւելորդ է այստեղ:

Պերճ Թէրզեանի գրելաճը պարզ է, անպաճոյճ, հեռու վերամբարձ բառերէ, միեւնոյն ժամանակ՝ հատու, երբեմն՝ նոյնիսկ ցաւցնող, բայց ոչ երբեք չարութեամբ թաթխուած: Ան չի խնայէր քննադատուելիք անձին կամ ազգային մարմինին՝ ի՛նչ հանգամանք ալ անոնք ունենան:

Կուզենք յատկապէս նշել հեղինակին, հաւանաբար նաեւ Դոկտ. Վաչէ Ղազարեանի ողջունելի բժախնդրութիւնը հատորի լեզուի անաղարտութեան նկատմամբ: Պերճ Թէրզեանը մեր առջեւ սփռած է

հայոց լեզուի ամբողջ պերճությունն ու վեհությունը: Հրապարակումներուն մէջ կը հանդիպինք նորակերտ կամ գործածութենէ դուրս եկած կարգ մը բառերու, ինչպէս՝ «ցուցօն» հիանալի բառը: Խոստովանիմ՝ վերջին քանի մը տարիներուն չէի ըմբռնած արեւմտահայերէնի ամբողջ հարստութիւնը, ինչպէս այդ վայելեցի այս ժողովածուն ընթերցելով, ու աւելի լաւ հասկցայ հեղինակին ապրած խոր ցաւը ի տես եւ ի լուր եգիպտահայ «նոր սերունդին ճնշող մեծամասնութեան» արաբերէնախառն «հայերէն»-ին, «ուր տիրող լեզուամտածողութիւնը արաբական է»:

Բոլոր հրապարակումներուն մէջ մեր առջեւ կը ցցուի գործունեայ, բայց շատ համեստ անձնաւորութիւն մը՝ յանձին Պերճ Թերզեանի, որ կը ցաւի թերացումներուն համար, կ'առաջարկէ խելամիտ եւ գործնական լուծումներ՝ հեռու պոռոտախօսութենէ, մարդ մը, որ կը հաւատայ հաւաքական աշխատանքի արդիւնաւետութեան ու յաճախ ալ եգիպտահայ կեանքին մէջ այդ ուղղութեամբ նախաձեռնութիւններու հեղինակ կամ շարժիչ եղած է:

Պերճ Թերզեանի «Յետադարձ Անդրադարձ» ժողովածուն կարելոր ներդրում մըն է վերջին տասնամեակներու հայ հասարակական-հրապարակագրական մտքի պատմութեան մէջ: Ամբողջովին համաձայն ենք «Առաջաբան»ի հեղինակ, պատմագիտութեան դոկտոր Աշոտ Մելքոնեանի գնահատականին. «... շրջանառութեան է հանուում գիտաճանաչողական բնոյթի մի աշխատանք, որը մեծ հետաքրքրութիւն է առաջացնելու ինչպէս սփիւռքեան, այնպէս էլ հայաստանեան գիտաքաղաքական եւ ընթերցող լայն հասարակայնութեան շրջանակներում»:

Երեւան

«Ազգ Օրաթերթ - Մշակոյթ», թիւ 17, 6 Նոյեմբեր 2010



ԵՐԱՆ ԳՈՅՈՒՄՃԵԱՆ

ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Սփիւռքի հայապահպանման մեր ճիգերուն մէջ, անփոխարինելի է, վստահաբար, դերը ազգային-հասարակական գործիչին. անոր՝ որ քանիւ եւ գործով, հանապազօրեայ նուիրումով, տեսիլքի մը, գաղափարի մը եւ նպատակի մը հետամուտ կ'աշխատի ի շահ հաւաքականութեան, կը ներշնչէ զայն, ուղղութիւն կու տայ անոր...:

Նման անձնաւորութիւն է՝ անկասկած՝ Գահիրէի հայ կեանքին մէջ ազգային-հասարակական, կրթական-մշակութային լայնածաւալ գործունէութիւն տարած ու դեռեւս տանող, անխոնջ եւ նուիրեալ Պերճ Թէրզեանը: Արդարեւ, ան պատասխանատու պաշտօններ վարած է եգիպտահայ գաղութի մարմիններուն մէջ՝ ՀԲԸՄ-ի, Հայ Ազգային Հիմնադրամի, Ուսումնական Խորհուրդի, Թեմական եւ Քաղաքական Ժողովներու եւ այլ: Պերճ Թէրզեան նաեւ կորովի հրապարակագիր է, որուն հեղինակած «Յետադարձ Անդրադարձ» գիրքը դեռ վերջերս լոյսին է ընծայուել՝ 2010-ին, Գահիրէի մէջ եւ ձօնուած է իր կեանքի ընկերուհիին՝ Սեդային: Սոյն գիրքը հատորի մը մէջ կ'ամփոփէ՝ յօդուածներու, ելոյթներու, հարցազրոյցներու եւ ուսումնասիրութեան ժողովածոյ մը, որոնք մեծաւ մասամբ ատենին հրատարակուած են «Արեւ» թերթին մէջ եւ արտատպուած՝ սփիւռքահայ այլ թերթերու մէջ:

Ձեռքիս տակ է այդ գիրքէն օրինակ մը, զոր ազնուաբար ինծի նուէր առաքած է հեղինակը եւ որ կը կարդացուի մեծ հետաքրքրութեամբ, որովհետեւ անիկա գաղութահայ կեանքի աւելի քան երեք տասնամեակներու ժամանակահատուած մը պարփակող երեւոյթներու եւ իրադարձութեանց, դէմքերու եւ դէպքերու անդրադարձ մըն է, որ կ'ընդգրկէ ի մասնաւորի եգիպտահայ գաղութի բոլոր բնագաւառները՝ հայկական ռատիոժամէն ու մամուլէն մինչեւ կրթական, մշակութային ու մարզական գործունէութիւն, թեմական-քաղաքական կեանք, ինչպէս նաեւ՝ անոնց հետ առնչուող բազում խնդիրներ, կոտտացող վերքեր, շինիչ քննադատութիւններ ու առաջարկներ..., որոնք

համասպիւռքեան ու համագգային տարողութիւն ունին: Հետեւաբար՝ ուսանելի են իւրաքանչիւր հայու համար:

Հեղինակին մտահոգութեանց գլխաւոր առանցքը, յայտնապէս, հայ վարժարաններն են, անոնց արդիականացումը, անոնց օժտումը նոր ու որակաւոր ուժերով, որպէսզի դառնան նկարագիր կերտող, ազգային լեզու եւ ոգի ջամբող լուսատու օճախներ: Այսինքն՝ դառնան հայապահպանման ու հայակերտման դարբնոցներ, քանզի «այնքան ատեն որ կը յաջողինք պահել մեր ինքնութիւնը, միշտ յոյս կունենանք մեր երազին հասնելու»: Եւ փոխադարձաբար՝ ինքնութեան կորուստով, ամենէն մեծ քաղաքական յաղթանակներն անգամ կրնան պարտութեան վերածուիլ, կը նկատէ ան իրաւացիօրէն:

Ազգային այլ հիմնախնդիրներ, որոնց վրայ սեւեռուած է իր անդրադարձը, կրնդորկեն՝ Հայ եկեղեցին, Էջմիածին-Անթիլիաս յարաբերութիւնները, հայրենամերձ գաղութներէն արտագաղթը, սփիւռքահայ մամուլին դիմագրաւած դժուարութիւնները, հայրենիքի գաղափարի գերադասումը օրուան վարչակարգէն եւ դրօշակի գոյնէն, Հայ Դատի լուծման ուղիները...: Այս բոլորին նկատմամբ իր ցուցաբերած վերաբերմունքն ու մօտեցումները կը ցոլացնեն սրտացաւ եւ ողջամիտ հայրենասէրը, առարկայապաշտ մտածողը, սկզբունքային գործիչն ու իդճամիտ, անձնդիր ղեկավարը:

Պերճ Թերզեան ջերմ հաւատացողն է հաւաքական ներդաշնակ աշխատանքի, գաղութի ուժերու անկեղծ գործակցութեան՝ «պոռոտախօսութիւններէ եւ լեզուական մարզանքներէ հեռու մթնոլորտի մը մէջ»..., քանզի՝ «մեր միակ փրկութիւնը մեր սեփական ուժին մէջ է», իսկ այդ ուժը ստեղծելու նախապայմանը՝ ազգային գերագոյն նպատակներու շուրջ մեր համախմբումն ու գործակցութիւնն է: Կշռադատ հայրենասէրն է ան, որ կը տազնապի՝ հայ կեանքէն ներս յայտնուող արժեչափերու խախտումով, հոգեմտաւոր արժէքներու թերազնահատումով, գաղութին եւ անոր կազմակերպութեանց «ապամտաւորականացումով», հայերէն լեզուի տխուր նահանջով, հատուածամոլ մտայնութեան ազգավնաս դրսեւորումներով...:

Հաւատալով որ ճիշդ ախտաճանաչումը կարելոր է ազգային-հաւաքական վերքերու դարմանումին համար, հեղինակը մատը կը դնէ մեր մէջ տարածում գտած ազգային, ընկերային ախտերուն վրայ, որոնց բուժումը հաստատապէս անհրաժեշտ է, եթէ կուզենք իրականացնել ազգային մեր իդճերն ու իտէալները...: Բազում ու

բազմազան են անոնք, ինչպիսիք են, օրինակ՝ «սնոպիզմը», որ ցույք է առանց խորքի, «գեշ մարդ» չըլլալու մտահոգությունը, մեր անձնական եւ հատուածական եսամոլությունը, հարցերուն երեւոյթները եւ ոչ՝ էությունը կարեւորելու տարամադրությունը, կեղծ պատիւներ եւ գովասանք ընդունելու հակումները, ինքնագոհութեան ախտանիշը...:

Ազգային-հաւաքական կեանքը դեկավարելու կոչուած տարրերուն մօտ՝ ի մասնաւորի՝ ան անհրաժեշտ կը համարէ գիտակից լռութիւնը, պարտականութեանց գիտակցութիւնը, անձնուրաց եւ անձնուէր վարքագիծը, տեսիլք ու ոգի ներշնչելու յատկանիշը, անձնական եւ հատուածական եւերէն հրաժարումը, բարդ կացութիւններ դիմագրաւելու քաջութիւնը...:

Գիրքին մէջ տեղ կը գտնեն նաեւ տարբեր առիթներով Պերճ Թէրգեանի ունեցած ելոյթները, հարցազրոյցները եւ մասնաւորապէս իր կատարած մէկ ուսումնասիրութիւնը «Եգիպտահայ Վարժարանները Այսօր» խորագրեալ: Վերջինը բժախնդիր աշխատանք մըն է, որ կրնայ ուսանելի եւ օգտակար ըլլալ համահայկական կրթական համակարգ ստեղծելու մեր ճիգերուն ուղղութեամբ յատկապէս: Հետաքրքրական է կարդալ իր «Յաւելուած» խորագրեալ բաժինը, ուր իր յօդուածներուն արձագանգներուն անդրադառնալով, ան ի մասնաւորի կը նշէ որ՝ առ ի հետեւանք իր կարգ մը հրապարակային քննադատութեանց, ոմանք դադրած են զինք բարեւելէ եւ առ այսօր քէն կը պահեն իրեն դէմ: Հարկ կա՞յ մեր կողմէ աւելցնելու որ այս երեւոյթը, դժբախտաբար, համատարած է հայ իրականութեան մէջ, առ հասարակ, ուր ինչպէս հեղինակը կը մատնանշէ, քննադատութիւնը, նոյնիսկ շինարար, անձնական թշնամանք կը նկատուի շատերու կողմէ...:

Սակայն, մեր հայեցողութեամբ, ճշմարիտ հրապարակագիրը ան է, որ սթափ հայեացքով եւ արիաբար կը բարձրաձայնէ հաւաքական կեանքին մէջ առկայ ախտագին երեւոյթները, թիւրն ու թերին, վնասաբերն ու կործանարարը յօգուտ նոյն այդ հաւաքական կեանքի առողջացումին, անոր անխափան յարատեւութեան եւ յառաջընթացին: Այս առումով ալ, շինարար ու ճիշդ քննադատութիւնն է, որ կրնայ ուղի հարթել սխալներու սրբագրումին եւ հաւաքականութեան յառաջդիմութեան ու վերելքին համար:

Գերազանցօրէն այս յատկանիշն է, կը խորհինք, որ կը կազմէ գիրքին գլխաւոր արժանիքը, որուն համար ալ սրտանց կը շնորհաւորենք հեղինակը, յարգելի Պերճ Թէրգեանը, իրեն մաղթելով քաջառող-

ՅԵՏԱՊԱՐԶ ԱՆՊՐԱՊԱՐԶ

ջութին, արեւշատութիւն եւ անխոնջ կորով՝ շարունակելու համար իր ազգային-հասարակական, կրթական-մշակութային, ինչպէս նաեւ հրապարակագրական բեղուն եւ հայաշահ գործունէութիւնը: Վարձքը կատա ր:

Նիկոսիա

«Ազատ Զայն», Նիկոսիա, Նոյեմբեր-Դեկտեմբեր 2010



ՎԱՐՈՒ ՔԷՐԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՂ
ՀԱՏՈՐ ՄԸ

Կը կարծեմ, որ հրապարակագրութիւնը Սփիւռքի մէջ նախ եւ առաջ աւանդութիւն մը կը նուիրագործէ: Լաւագոյն արդիւնքը, որ կրնանք ակնկալել, պատմութեան եւ պատմականութեան ապահովումն է՝ ոգեկան խարիսխներու ստեղծումը՝ անցեալի ու ներկայի միջեւ: Օրաթերթերը, պարբերականներն ու զանազան հրատարակութիւնները այսօրուան իրենց անդրադարձներով առօրեայ պահանջներ կը գոհացնեն լոկ, սակայն մէկ օրէն միւսը կը դառնան կենսագրութիւն, պատմութիւն: Այսպէս է, որ հրապարակագրութիւնը եւ գրաւոր խօսքը, ընդհանրապէս, կամրապնդեն մեր ներկան եւ կը կապեն մեզ ժամանակի նաւուն հետ: Յետադարձ հայեացքի կարողականութեամբ եւ ապագային ուղղուած սելեռումներուն շնորհիւ, հրապարակագրութիւնը պատեհութիւնը ունի ապահովելու ժամանակի շարունակական ընթացքը՝ մատնանշելու, երեսն հանելու իրականութիւնը, կեանքին ցաւոտ կողմերը, դիմագրաւած դժուարութիւններն ու խնդիրները, փոքրիկ յաջողութիւններն ու յանուն գոյատեւման պայքարի ճիգը՝ իրենց ողջ պարունակով. այլ խօսքով, դառնալ ժամանակի հայելին ինչպէս երէկի, այնպէս ալ՝ ներկայի անդրադարձներով: Հաւանաբար այդ իսկ է աւանդութիւն կամ պատմականութիւն կոչուածին իմաստը՝ ապահովել ժամանակի ներկայութիւնը ժողովուրդի գիտակցութեան մէջ:

Տարիները արագ կը սահին. այդ թաւալումին հետ կը սահին կերթան դէմքեր ու դէպքեր, մշուշի թանձր շղարշով կը պատուին եղելութիւնները, ամենակարեւորը՝ ճշմարտութիւնն ու իրականութիւնը կորսուելու վտանգին կենթարկուին: Հրապարակաւ ըսուած խօսքը, մասնաւորաբար՝ իրատես անկողմնակալ եւ անաչառ խօսքը, առօրուան առաջին շողերու նման լոյս կը սփռէ իրականութեան վրայ:

Ամեն մարդու բան չէ ատիկա. եզակի են անոնք, որոնք կ'ունենան իրենց մէջ քաջութիւնը երեւոյթները իրենց անուններով կոչելու, իրենց մէջ ուժը կ'ունենան ճշմարտութիւնը ըսելու, ահագանգելու վտանգը: Անոնք՝ այդ քիչերը, իրենց անձէն ու վաստակէն աւելի, իրենց մէջ կը տեսնեն առաքելութիւնը՝ հետեւելու ու հասկնալու, վերլուծելու ու արձանագրելու, թէ ինչ կ'անցնի ու կը դառնայ տիեզերքի մէջ եւ այստեղ՝ իրենց շուրջն ու իրենց պատկանած միջավայրին մէջ, որ յետոյ պիտի դառնայ պատմութիւն, եւ որուն բուն տարողութիւնը գալիք տարիներուն ի յայտ պիտի գայ:

Սխալ պիտի ըլլար խորհիլ, թէ իւրաքանչիւր հրապարակում կամ լրագրական աշխատանք նոյն բախտին պիտի արժանանայ կամ կոչուած է նոյն դերը կատարելու: Հրապարակագրութիւնը, այդ մշակոյթի բարձր վիճակին մէջ, մտածումի ու խոհի իրական հասկացողութեամբ կրնայ նուաճուիլ: Ճշմարտութիւններ կան, որոնք պէտք է լոյսին բերուին, որպէսզի չմոռցուին մեր օրերու խառնիճաղանձին մէջ, երբեմն ճշդումներ ընել՝ յստակացնելու համար իրավիճակը, պահը. գրական այս սեռը ի վերջոյ կը ծառայէ որոշակի նպատակի՝ յստակ կերպով հարցեր եւ խնդիրներ արծարծելուն:

Այս քիչ մը երկար նախաբանը՝ ընդհանրապէս հրապարակագրութեան մասին, որուն մէջ տեսնելու է ներկայացուող հատորին նշանակութիւնը:

Ժամանակն է կարծեմ հանրութեան յայտնելու այս տողերուն գրուելուն առիթը հանդիսացող հատորին եւ անոր հեղինակին անունը՝ «Յետադարձ Անդարադարձ», Պերճ Թերզեան, Գահիրէ, 2010: Հատորը իր ամբողջութեան մէջ կը ներկայացնէ հեղինակին տարիներու ընթացքին հրապարակած յօդուածներու, էլոյթներու, հարցազրոյցներու հաւաքում մը. աւելի քան 300 մեծադիր էջերէ բաղկացած հրաշալի հատոր մը, իրապէս արժեքաւոր իր բովանդակութեամբ ու տարողութեամբ, որ կը սահմանէ հեղինակին՝ Սփիւռքի հայ մարդուն, հասարակական գործիչին, գրագետին սկզբունքները, տազնապները, ակընկալութիւններն ու գաղափարաբանութիւնը: Այս ակնարկութիւնը շեշտելու է, քանի որ, ըստ իս, սփիւռքահայ մտաւորականին, գրագետին ինքնութեան մէջ ազգային հասարակական եւ բարոյական յատկանիշը այնքան կարեւոր է, որքան՝ իմացականը կամ կրթութիւնը: Եւ լաւ է, որ մօտենանք Պերճ Թերզեանի անձին եւ գործին, մանաւանդ՝ միշտ անկեղծ իր ամբողջական հայու խոհերուն եւ մտածումներուն:

Պերճ Թերզեան բարեհամբաւ հայր յաճախ կարելոր դեր ստանձնած է Եգիպտահայ գաղութի ազգային, եկեղեցական, հասարակական շրջանակներու մէջ, յատկապէս ՀԲԸՄ-ի իբրեւ պատասխանատու վարչական՝ սատարած է հայ գիրի ու գրականութեան պահպանման ու զարգացման, հայ մշակոյթի ու պատմութեան յաւերժացման: Իբրեւ հիմնական մղիչ ուժ՝ ան լիաբուն ծառայութիւններ մատուցած է հայ մշակոյթի վերարժեւորումի գործին՝ յաճախ լուսարձակներէ հեռու ստեղծելով հայրենիք-սփիւռք արդիւնաւետ համագործակցութեան յիշատակելի օրինակներ:

Ի՞նչ թել է, որ կը կապէ հատորին մէջ տեղ գտած գրութիւնները իրարու. գուրգուրոտ վերաբերումը՝ նախ զինք շրջապատող աշխարհին ու պատկանած ժողովուրդին, ապա նաեւ՝ աշխարհի անցուդարձերուն ու երեւոյթներուն յստակատեսութեամբ նայելու կարողութիւնը: Հեղինակին խորհրդածութիւններն են անոնք, մէկը միւսէն խորունկ, երբեմն բարդ եւ հակասական, միշտ խնդիրներուն հետեւողի ու վերլուծողի թերզեանական համոզումներու հունին մէջ: Համոզումներ, որոնք կը բխին երկար տարիներու վարչական, պատասխանատու ու յանձնառու գործիչի փորձառութենէն: Կա՞յ համայնքային, թէ համագային կենսական հարց մը, որուն սեւեռած չըլլայ հեղինակը:

Սփիւռքի եւ հայրենիքի գրեթէ բոլոր կենսական հարցերը իրենց անդրադարձը ձգած են իր գրութիւններուն մէջ: Անդրադարձներ, որոնք լոյս կը սփռեն Ի. դարու վերջին քառորդին Եգիպտահայ գաղութին թեմական, կրթական, մշակութային, ընկերային կեանքին մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն կամ, ընդհանրապէս, համագային մտահոգութեան առարկայ եղող խնդիրներուն, հայրենիք-սփիւռք յարաբերութիւններուն, միջ-գաղութային կապերուն ու մինչեւ Եգիպտոսի եւ արաբական աշխարհի անցուդարձերուն վրայ:

Հատորը կազմուած է չորս բաժիններէ. առաջինը՝ «Յօդուածներ» խորագրեալ, կամփոփէ ծաղկաքաղ մը հեղինակին տարբեր տարիներուն գլխաւորաբար «Արեւ» օրաթերթին մէջ լոյսին եկած յօդուածներուն, երկրորդ՝ «Ելոյթներ» ընդհանուր խորագիրին տակ կը ներկայացուին հեղինակին զանազան առիթներով արտասանած ելոյթներն ու զեկուցումները: Երրորդ՝ «Հարցազրոյցներ» բաժնին մէջ տրուած են ինչպէս հեղինակին կողմէ, այնպէս ալ իրեն հետ կատարուած հարցազրոյցներու շարք մը, որոնց մէջ արծարծուած հարցերը

ուղղակիօրէն կ'առնչուին գիրքին ընդհանուր բնոյթին: Չորրորդ բաժինը կ'ամփոփէ եգիպտահայ ազգային վարժարաններուն ներկայ վիճակին նուիրուած հեղինակին կատարած արժէքաւոր ուսումնասիրութիւնը:

Բոլոր նիւթերը, որքան ալ ժամանակով իրարմէ հեռու, իրենց բազմազանութեան մէջ իւրովի արժէքաւոր են եւ մեծապէս շահած են հեղինակին բիրտեղացած մտածումներուն, տրամաբանական վերլուծութիւններուն շնորհիւ: Հեղինակը չի բաւականանար հարցերը բարձրաձայնելով, մատը վերքին վրայ դնելով կամ խարազանելով, ան հանդէս կու գայ այս կամ այն ցաւոտ հարցին շուրջ առաջարկներով, կը փորձէ լուծումներ գտնել: Գուցէ գտնուին մարդիկ, որոնք հակադրուին հրապարակագիրին արտայայտած այս կամ այն գաղափարին կամ տեսակէտին, սակայն ոչ մէկ պարագայի կարելի է տարակուսիլ, որ իր յարուցած հարցերը միշտ անկեղծ են ու տեղին: Յօդուածի մը առիթով հեղինակին արտայայտած հետեւեալ միտքը թերեւս կարելի է տարածել ողջ հաստորին վրայ. «Այսօր, շուրջ քսանհինգ տարուան հեռաւորութենէ մը, կրկին կարդալով այդ յօդուածները, հանգիստ սրտով եւ առանց ենթակայական թուելու, կարելի է հաստատել, թէ անոնք հարագատօրէն կը ցոլացնեն պատմական որոշ ժամանակահատուածի մը...» յաւելենք իրականութիւնը:

Կրնանք միայն կռահումներ ընել այն հակազդեցութիւններուն մասին, զորս ապրած է հեղինակը շրջապատին յաճախ ճնշող, իսկ աւելի յաճախ կրաւորական անտարբերութեան մէջ: Այս տեսակէտէն արժանին մատուցելու է հեղինակին, քանի որ գիտենք, թէ որքան դժուար, չըսելու համար՝ ցաւոտ է սփիւռքի մէջ ուրոյն կեցուածք ու տեսակէտ ունենալ, առաւել եւս առաջնորդուիլ սեփական համոզումներով՝ յանուն գաղափարի, յանուն մտածումի:

Տագնապող հայ մըն է ան, ի հարկէ՝ պատկանելիութեան յստակ գիտակցումով, սակայն անկախ մտածող մը, գաղափարապաշտ մը, չմարդող, մշտաբար, միշտ անկեղծ ու մանաւանդ՝ ամբողջական նուիրումով, հայրութեամբ ու հայրենասիրութեամբ:

Կը չափազանցեմ մ: Չեմ կարծեր: Յամենայն դէպս կը հարցնեմ ինծի, թէ ի՞նչ բան մղեց զիս, որ երբ օրեր առաջ կարդացի գիրքը, ցանկութիւն յառաջացաւ անպայման արձագանգել, բայց չէի ուզեր, որ ան ըլլայ սովորական, կաղապարուած գրախօսական մը, այլ զրոյց մը, խորհրդածութիւն մը՝ գիրքին շուրջ ու գիրքին մասին:

Ամենէն առաջ պիտի ուզէի մատնանշել հատորին պատմական արժէքը: Այս հաւաքումը առատ նիւթ կրնայ ապահովել այսօրուան ու վաղուան ուսումնասիրողին համար՝ գրուած ժամանակակից ակա-նատես, գործնապէս ալ մասնակից հեղինակին կողմէ:

Յայտնի իրողութիւն է, անձնական փորձով ալ գիտեմ, թէ գաղութ-ներու պատմութեան ուսումնասիրութեան համար որքան օգտակար դեր կրնան ունենալ նման հրատարակութիւնները: Այստեղ արծար-ծուած նիւթերը, հեղինակին արդար մտահոգութիւնն ու տագնապը սփիւռքեան եւ ընդհանրապէս հայ իրականութեան խնդիրներուն հանդէպ՝ ճակատագրական պահերու, կորսուած պատեհութիւններու վերլուծումներու գուցորդումներով, առանց զեղչ ու զիջումի կը ծառա-յեն սփիւռքի մօտաւոր անցեալի ուրուանկարը ունենալու: Հատորին մեծագոյն առաւելութիւնը այն է, որ հեղինակը չի մնար սոսկ արձա-նագրողի, իրականութիւնները պատճենահանողի սահմաններուն մէջ. ան սեփական վերլուծումներով, ճիշդ եւ դիպուկ գնահատա-կաններով կը հասնի եզրայանգումներու: Տեսակէտներ, որոնք ըլլալով անհատական՝ կ'անցնին ընդհանրականին սահմանները եւ կը ստեղ-ծեն ճիշդ արժեչափեր:

Կուզէի շեշտել շատ կարեւոր այլ յատկանիշ մը եւս. այս բոլորին մէջ ի սպառ կը բացակային շաղակրատութիւնը եւ հռետորական շեշտը. բոլոր գրութիւնները գրուած են թերզեանական հատու ոճով, առանց լալահառաչ ճիչերու եւ թող որ երբեմն կ'եղծ հնչող կարգա-խօսներու: Այն ճշմարտացի տարեգրութիւն մըն է՝ կամրջուած ինչպէս սփիւռքի, այնպէս ալ հայրենիքի մէջ առկայ խնդիրներուն վրայ:

Հատորը իր ամբողջութեան մէջ կը ցոլացնէ հայրենի հողէն կտրուած սփիւռքի մարդու աշխարհընկալման, բարոյահոգեբանա-կան չափանիշները. «Եղեռնը եւ անոր նախորդող ու յաջորդող դառն դասերը, որոնք մինչեւ այսօր ալ կը շարունակուին, պէտք է մղեն մեզ մեր հոգեկան եւ մշակութային կապերը աւելի եւս սերտացնելու մեր հայրենիքին հետ եւ աւելի գուրգուրանքով ու ջերմութեամբ փարելու անոր՝ որպէս ներկայի ու ապագայի միակ յուսալից կռուան եւ յուսատու ապաւէն»: Այս տողերը գրուած են արդէն անցեալ դարու վերջին, հայրենիքի անկախացումէն ալ առաջ, բայց արդեօք դադրած են հրամայական ըլլալէ: Ինչպէս կըսեն, ժամանակը ամէն բան իր տեղը կը դնէ, իսկ մենք՝ այդ ժամանակի կրողներս, պարտաւոր ենք իւրաքանչիւրս մեր հնարաւորութեան սահմաններուն մէջ մեր դերը

կատարել, պարտաւոր ենք մեր ազգային գոյութիւնն ու էութիւնը պահպանելու համար յարաբերութեան եզրեր գտնել մէկ կողմէ մեր պատկանած միջավայրին հետ, միւս կողմէ՝ հաւատարիմ մնալ մեր ազգային արժէքներուն: Եւ այդ՝ մեզ այսօր այնքան շատ պակսող ազգային մտածողութեան, ազգային միասնականութեան եւ ազգային միասնական ծրագրի մը շուրջ համախմբելու ուղին է:

Որքան խորունկ ճշմարտութիւն կայ հետեւեալ տողերուն մէջ. «Գոյութիւն չունի որեւէ հիմնական ծրագիր, որ անմիջական վաղը եւ մօտիկ ապագան նախատեսէ ու ընդգրկէ: Ջլատիչ սպասումի հոգեբանութիւն մը՝ յար եւ նման հոգեբանութեանը այն մարդուն, որ գիտէ թէ մահացու հիւանդութենէ կը տառապի եւ ճակատագիրին համակերպելով կը սպասէ մահուան: Կը զգայ մահուան մօտիկութիւնը, բայց չի գիտեր թէ երբ պիտի ժամանէ ան: Այս հոգեբանութիւնը հիմէն պէտք է արմատախիլ ընել եւ անխնայօրէն հալածել: ... Մեզի համար կենսական է ազգային գոյատեւումի համար մղուելիք պայքարի ոգիին արծարծումը»:

Հայրենասէր ու ազգասէր հեղինակը երբեմն ականայ տխուր նախատեսութիւններ կ'ընէ մեր ժողովուրդի վաղուան ու մօտալուտ ապագային մասին, բայց անոնք որպէս կանոն հեռու են յոռետեսական յայտարարութիւններէ (որոնց յաճախ կը հանդիպինք մեր օրերուն): Այլապէս շահեկան այս վրդովմունքը կը նպատակադրէ ահագանգ հնչեցնել սփիւռքի պահպանման եւ յետագայ ճակատագիրին համար:

«Այն օրէն ի վեր, որ մեր գաղութը արտագաղթի պատճառով կորսնցուց իր թիւին կարելոր մէկ մասը, ամէն մակարդակի ղեկավարներ զանազան մարզերու մէջ մեր ունեցած ընկրկումները կը սիրեն վերագրել գաղութին նօսրացումին: Արդեօք ճիշդ է այս ախտաճանաչումը: Կասկածելի է որ այս հարցումին պատասխանը անպայման դրական ըլլայ: Մեր բուն ցաւը պէտք է փնտռել գաղութին եւ անոր կազմակերպութիւններուն «ապամտաւորականացում»ին մէջ, եթէ կարելի է նման եզր մը գործածել: ...Նոյն ձեւով կրնանք ըսել. «Ինծի ըսէ ո՛վ է գաղութիդ մէջ որոշում առնող տարրը, քեզի ըսեմ, թէ ինչպիսի գաղութի մը մաս կը կազմէս դուն»: Ահա այսպէս է որ հեղինակը կը փորձէ եւ կը յաջողի բիրեղացնել իր մտածումները եւ մեզ կը հրաւիրէ խորհրդածութեան:

Տակաւին, կայ քննադատական վերաբերումը. ան չի վախնար եզրակացութիւններ կանխարտայայտելէ: Հայ լեզուի, հայ մշակոյթի

արժեքներու հանդէպ հեղինակին անսահման սէրն ու պաշտամունքը զինք կը մղեն դատապարտելու կէանքէն եւ իրականութենէ կտրուած ինքնախաբէութեան անհատական եւ հաւաքական մեղաւոր վարքագիծը: «Կան հարցեր, որոնց մասին նուազագոյն եւ անցողակի անդրադարձն անգամ զգայնութիւններ կը յառաջացնէ: Սակայն զգայնութիւնները հաշուի առնող պարտադիր լռութիւնը չէ, որ պիտի լուծէ մեր հարցերը... Ոմանք խաղաղութիւն ըսելով՝ սխալ երեւոյթներու առջեւ պարտադիր լռութիւն կը հասկնան. ուրիշներ համերաշխութիւն ըսելով՝ աթոռաբաշխում կը հասկնան... Իսկ այս բոլորէն ետք, հայապահպանումի մասին բեմերէն արտասանուած ճառերը եւ թերթերու լայնքին սփռուած սաւանածաւալ յօդուածները պարզապէս անիմաստ կը դառնան, որովհետեւ ընթացքը, որուն մէջ կը գտնուինք, մեզ հասցուցած է հոն, ուր հայապահպանումի մասին ըսուածները մտիկ ընող ու հասկցող սերունդը պակսած է վտանգաւոր չափերով. հայապահպանումով կամ, ընդհանրապէս, հայութեամբ հետաքրքրուող սերունդ մը կրնայ գոյութիւն առնել կամ գոյատեւել ՄԻԱՅՆ մեր վարժարաններուն մէջ ջամբուելիք առողջ, հայեցի եւ ամբողջական դաստիարակութեան մէջ»: Ահա՛ դեղատոմսը որ կը թելադրէ գլխաւոր հրամայականը:

Կուռ եւ ամբողջական դատողութիւններով հատորը կրնայ պատկերացում տալ սփիւռքի այսօրուան ու երէկի հիմնահարցերուն մասին, ուր միշտ առկայ է գործնական առաջարկը: Պարզապէս ընդվզեցուցիչ է համակերպիլ եգիպտահայ գաղութին մէջ հայ լեզուին օրաւոր սաստակացող նահանջի երեւոյթին. «Մեր առօրեայ կէանքին մէջ յաճախ կը հանդիպինք անհաճոյ երեւոյթներու, որոնց վրայէն անտարբերութեամբ կանցնինք: Մեր շուրջը հասակ նետող նոր սերունդը հայերէնի խօսակցական իր լեզուն խճողած է օտար բառերու այնպիսի բանակով մը, որ եթէ չըլլան բայերը խոնարհելու եւ բառերը հոլովելու հայկական ձեւերը, կրնաք դիրտութեամբ ունենալ այն տպաւորութիւնը, որ օտար լեզուով արտայայտուող խօսակիցներ են խօսողները, որոնք երբեմն հայերէն բառեր կը գործածեն: Այս բոլորէն վերջ, տակաւին կան խելացի մարդիկ, որոնք լաւատես են համայնքին ապագային մասին, կը յուսան որ այս ընթացքով համայնքը կրնայ պահպանել իր ազգային դիմագիծը»: Աւելցնենք, որ նոյն վիճակն է քիչ մը ամէն տեղ:

Համարժեք փաստերու, վաւերական եւ համոզիչ եզրակացու-

թիւներու վրայ հիմնուած գրութիւնները (որ ի դէպ գրութիւններուն կարելոր յատկանիշներէն են), նոր եզրայանգումներու դուռ կը բանան եւ կը ստիպեն յետադարձ ակնարկ մը նետել մեր ոչ հեռաւոր անցեալին վրայ: Հեղինակը անկեղծ իր վրդովմունքը կ'արտայայտէ դեռ 1956-էն ծայր առած սփիւռքի ամէնէն ցաւոտ՝ Ս. Էջմիածնի եւ Անթիլիասի կաթողիկոսութիւններուն լարուած յարաբերութիւններուն, մասնաւորաբար գաղութին մէջ ստեղծուած անբաղձալի բեւեռացումին դէմ:

Այստեղ յստակ է ե՛ւ դիրքորոշումը, ե՛ւ լայնքով ու խորքով մեկնութիւններու համարձակութիւնը: Պատմութեան այդ դեղին էջերուն՝ Անթիլիաս-Էջմիածին ամուլ պայքարին վատնուած կորովին դէմ յանդիման կանգնած հեղինակին տեսանող հայեացքին պէտք ունինք իսկապէս:

Գրութիւններուն մեծ մասը ունին հեղինակին ներքին էութենէն բխող անկեղծ մտահոգութիւն մը: Այդ մտահոգութիւնը կը դրսեւորուի ինչպէս վճռակամ քայլեր առնելու ուղղուածութեան, այնպէս ալ իր չափազանց քաղաքակրթասիրութեան մէջ: Մարդ մը, որ բարձր կը դասէ մարդկային, բարոյական արժանիքները, որ կընդվզի «դրամին շիշիկոցէն» ստրկացած հոգիներուն համար: Ահա՛ հատուած մը շատ բան ըսող ու բարձրաձայնող:

«Նիւթապաշտ այս դարուն մէջ, ուր կ'ապրինք, ոչ ոք կրնայ ժխտել դրամին կարելորութիւնը: Մեր ազգային կեանքին մէջ դրամին սերը կարգ մը մարդիկ իջեցուցած է ստրկամտութեան աստիճանին: Դրամին երկրպագութեան սկզբունքով կուռքի վերածուած են մարդիկ, որոնց արժէքը, - խօսքը հոգեկան եւ մտաւոր արժէքին մասին է, - հաւասար է ճիշդ ու ճիշդ իրենց գրպանի դրամին: Այս տիպի մարդիկ իրենց շուրջ կը գտնեն ոչ արհամարհելի թիւ մը քծնողներու, խոնարհողներու եւ խնկարկուներու, որոնք տեղի եւ անտեղի պատիւներու շռայլումով կը շփացնեն հոգեկան եւ մտային պարապութեամբ լեցուն այդ մարդիկը, այն սին յոյսով, որ թերեւս կարենան այդ մարդոց լաւ պահուած դրամէն բաժին մը կորզել ազգային սա կամ նա նպատակին համար»:

Եւ այստեղ կ'ուզեմ ընդգծել շատ կարելոր կէտ մը. Թերզեան կը գրէ այնպէս, ինչպէս կը խօսի, ինչպէս կը մտածէ եւ կ'ապրի, զինք մօտէն ճանչցողներ երբեք հակասութիւն մը պիտի չնշմարեն իր անձին, գործունէութեան եւ ըսածին միջեւ:

Շատ արժեքավոր է հատորին չորրորդ՝ Եգիպտահայ դպրոցներուն նուիրուած բաժինը, որ կարծեք ուսումնասիրողի մը մասներէն կաթած է: Կարելոր ներդրում մը անկասկած՝ եգիպտահայ կրթական կեանքի պատմութեան ուսումնասիրման համար: Նոյնպէս շահեկան է հատորին վերջը զետեղուած «Յաւելուած»ի բաժինը, ուր հեղինակը յաւելեալ բացատրութիւններ եւ որոշ լուսաբանութիւններ կու տայ հատորին մէջ տեղ գտած կարգ մը նիւթերու վերաբերեալ:

Տակաւին երկար կարելի է խօսիլ հատորին մէջ տեղ գտած՝ հեղինակին այս կամ այն անդրադարձին կամ հարցադրումին շուրջ, խոհի եւ մտածումի միասնութեամբ շաղախուած անոր չխարխալիող, առողջ եւ ջղուտ գրութիւններուն մասին: Բաւարարութիւնք ըսուածով՝ չըսւածները վերապահելով մեր հոգեկան եւ իմացական ներաշխարհին: Այն, ինչ որ կարելի չէ չըսել, հատորին բիրեղ մաքրութեամբ յամեցող, կարօտալի արեւմտահայերէն լեզուն է, որ անկասակած հատորին կարելոր յատկանիշներէն մէկը պէտք է նկատել մեր այս օրերուն:

Որպէս ամփոփում մեր կողմէ ըսուածին ու չըսուածին՝ յաւելենք, որ «Անդրադարձներու» հեղինակը հեռու է դիրքին «հայրենասիրութիւն» քարոզող կարգախօսներէ, առաւել եւս՝ ցուցադրութիւններէ: Հեռու այդ բոլորէն՝ ան կը գոհանայ հայրենասիրութեան գործով եւ ոչ խօսքով՝ իբր մտածող, նախաձեռնող եւ յանձնառու հայ մը՝ հայութեան զոյգ թելերուն վրայ, ի սփիւռս եւ ի հայրենիք:

Յամենայն դէպս ինծի լսելի էին սփիւռքի եւ հայրենիքի ցաւերով ապրող ու տառապող, սփիւռքի էութենէն ցայտող, անոր ապագային համար տրոփող սիրտին զարկերը՝ «Անդրադարձներ»ը:

Հալէպ

«Նոր Կեանք» շաբաթաթերթ, Կլենտէյլ, 23 Դեկտեմբեր 2010

«Ազդակ» օրաթերթ, Պէյրութ, 8 Յունուար 2011



ՊԷՊՕ ՄԻՈՒՆԵԱՆ

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ»Ը

ԳԱՀԻՐԷ, 2010

Մտաւորական կազմաւորումով ազգային, հասարակական եւ մշակութային մարզերու գործունէութիւններէն ներս ընդգրկուած դէմքեր հասարակական կոչումով պահանջքը կը զգան գիրով, խօսքով եւ այլ հրապարակային արտայայտութիւններով իրենց նպաստը բերելու հայ հասարակական միտքի զարգացման: Այդ բերումով կը դառնան յարգելի հրապարակագիրներ, տեսակէտ ընդհանրացնող յօդուածագիրներ: Այս դասու գրիչներուն փորձառութեան մը վրայ հիմնուած դատումներն ու խոհերը, եթէ գտած են նաեւ հայերէն լեզուի արտայայտչական վայելչութեան, մտածողութեան պարզ ու յստակ ոճը, հաճոյքով եւ հետաքրքրութեամբ կը կարդացուին: Կը փնտռուին նաեւ....:

«Յետադարձ Անդրադարձ» յօդուածներու, ելոյթներու, հարցազրոյցներու եւ ուսումնասիրութեան ժողովածոյի հեղինակ Պերճ Թէրզեան այդ դասու պատկանող գահիրէաբնակ գրիչներէն է, բացի ըլլալէ եգիպտահայ գաղութի կարկառուն եւ յարգելի վաստակի տէր դէմքերէն: Պատասխանատու հանգամանքներով գործած է ՀԲԸՄ-ի շրջանակէն ներս, անդամակցելով նաեւ Ազգային իշխանութեան ուսումնական խորհուրդին եւ Գահիրէի թեմական եւ քաղաքական ժողովներուն: Հաւատաւոր էջմիածնական ըլլալուն՝ չանտեսեր Կիլիկեան Աթոռի պատմական դերը, ջատագովը մնալով հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ միասնականութեան: Ճակատի մը, կողմի մը ուղեգիծով առաջնորդուելով եւ այդ ուղեգիծին յատուկ տեսակէտներ պաշտպանելով մէկտեղ, գրգռիչ ու թունալից չէ իր յօդուածներու գաղափարական յատակը, այլ ողջմիտ, անկեղծ եւ սրտցաւ ազգայինի մտորումներ, ազգային ցաւերու դարման գտնելու առաջադրանքներ, ազգը տագնապեցնող սփիւռքեան եւ հայրենական հարցերու

արծարծումներ՝ օգտապաշտական ձգտումով: Իր ազգային-հասարակական մտածողության առաջնորդող մեկնակետը կարելի է նկատել հետեւեալ բանաձեւումը. «Տրամաբանող մարդը պետք է ըմբռնէ որ ամենէն յաջող քաղաքականութիւնը կարելին լիովին իրագործելու քաղաքականութիւնն է»:

Այդ առարկայականութեան իրատեսութեամբ մօտեցած է հայրենասիրութեան ըմբռնողութեան Խ. Հայաստանի նկատմամբ դրական կեցուածքի, անկախութեան հարցին, հայ-ռուս յարաբերութիւններուն եւ առհասարակ հայկական դատի առընչութեամբ: Պերճ Թերզեանի հաւասարակշռուած դատողութեան մէջ ճամարտակութիւնը որեւէ տեղ գտած չէ, ինչպէս շատ մը պարագաներուն այդ մեղքը դրսեւորուած է սփիւռքահայ հրապարակագրութեան մէջ...: Լրջամիտ են իր դատումները, քննադատութիւնները, ախտաճանաչումները եւ նոր չափանիշներ ճշդող մտածումները՝ գաղութահայ կեանքը աւելի առողջ, համերաշխ եւ պահանջատիրական պայքարի մէջ միասնական եւ հատուածական շահերէ հեռու տեսնելու համահայկական ոգիով: Բարեշրջումի ակնկալութեամբ:

Հայ մարդու խղճմտութեամբ եւ պարկեշտ մտաւորականի հայեացքով Պերճ Թերզեան անդրադարձած է եգիպտահայ գաղութը յուզող հրատապ հարցերուն, որոնք կը վերաբերին հայ դպրոցի ճգնաժամային իրականութեան, միշտ մատը վերքին վրայ դնելու իրատեսութեամբ: Որքա՛ն ալ խոցելի ըլլայ իրականութիւնը եգիպտահայ դպրոցի պատկերին, տուեալները իրենց հարազատ գիծերով կը պարզուին գաղութի մը պարագային, որ հայկական սփիւռքի բարգաւաճ կեդրոններէն եղած է իր ազգային, մշակութային եւ կրթական կեանքով: Իր կրթական հաստատութիւններուն մէջ գրողներ, մտաւորականներ հասարակական դէմքեր պատրաստուած են: Պերպլերեան վարժարանը փակուած է: Գործող վարժարաններու աշակերտական պատկերը հետեւեալն է. Գալուստեան 52, Նուպարեան 103, Պօղոսեան 40: Բացի հայ գաղութի նօսրացումէն, հոն եւս օտարամոլութեան ախտը հետզհետէ կընդհանրանայ: Ասոր առններ հայերէն լեզուի եւ հայկական նիւթերու նոր ուսուցիչներու պակասը աւելի եւս մտահոգիչ կը դարձնէ հայ դպրոցի հայեցի դաստիարակութեան դերը: Ահա թէ ինչո՞ւ եգիպտահայ գաղութի եւ ընդհանրապէս հայկական սփիւռքի մէջ հայկական մտահոգութիւններէն մեկնելով Պերճ Թերզեան կառաջադրէ արեւմտահայերէնի ուսուցման համար ուսուցիչներու

պատրաստութեան կեդրոնի մը ստեղծումը. «Հիմնել արեւմտահայերէն դասաւանդող մասնագէտ ուսուցիչ պատրաստելու բարձրագոյն հիմնարկ մը (նախընտրաբար Հայաստանի մէջ), որ հետզհետէ զարգանալով վերածուի արեւմտահայերէնի մասնագէտ քատրերու կեդրոնի մը, որ թէ՛ մարդուժ պատրաստէ եւ թէ՛ գրականութիւն մշակէ (դասագիրք եւ պարբերաթերթ)»...: Բայց ինչո՞ւ Հայաստանի մէջ եւ ոչ թէ Սփիւռքի: Որքա՞ն ալ ինչ-ինչ պատճառներով,– հասկնալի եւ անհասկնալի,– իրար ետեւէ փակուեցան Պէյրութի հայագիտական բարձրագոյն հիմնարկները:

Պերճ Թերզեան հատորին մէջ տեղ մը կը խոստովանի, որ իր նախակրթարանի հայերէնը «որոշ չափ»ով բարելաւելով սահուն եւ վճիտ հայերէնով յօդուած գրելու մակարդակին հասցուցած է: Պէտք չէ՞ ափսոսալ այդ երանելի տարիներու հայերէնի մակարդակին համար...:

Եզիպտահայ գաղութի նօսրացումով բացատրուող ազգային համագործակցութեան դրական երեւոյթը վեր առնելով Պերճ Թերզեան բարձր կը գնահատէ ազգային իշխանութեան տիրացման համար ջլատիչ պայքարի անցեալի էջերուն փակուիլը եւ միասնական եւ հաւասարակշիռ մէկ ճակատով ընտրութեան մասնակցելու ներկայ դրութիւնը, որ օրինակ կրնայ ծառայել հայահոծ մայր գաղութներուն: Մենիշխանութեան վերջ տալու համագգային ողջախոհութեամբ եւ լայնախոհութեամբ: Հրապարակագիրին բանաձեւած սկզբունքին համաձայն. «Տարբեր մտածել, միասին գործել»:

Պերճ Թերզեանի անդրադարձներուն մէջ կարեւոր տեղ կը գրաւեն ընկերային, հասարակական բարքերու մէջ թափանցած ախտերու ախտաճանաչումը կատարող գրութիւնները, որոնք բացի յօդուածագիրին բարոյական հաստատ համոզումները արտայայտելէ, քաղաքացիական արիութիւնը կը ցուցնեն ճշմարտութիւնը ըսելու եւ գրելու: Այդ ճշմարտութիւնները ընկերային վերքերու վերաբերին, թէ պատմական ճշմարտութիւններ վերահաստատելու կամ բարձրաստիճան եկեղեցականներու ընդհանրականէն շեղումներուն...: Ճշմարտութիւնը ըսել թէկուզ «գէշ» մարդ ըլլալու եւ թշնամիներ շահելու գնով:

Գեղարուեստական գրականութիւն մշակելու յաւակնութիւն չունի Պերճ Թերզեան, բայց որոշ գրութիւններուն մէջ,– *Եկեղեցին Հայկական Պրիւքսէլի Մէջ, Զրոյց Օղին Մէջ*,– ակներեւօրէն պատմելու շնորհքը ցոյց կու տայ: Այսքան շահեկան եւ ուսանելի բովանդակութեամբ

հատորին եթե զեղչուէր պարագայական առիթներուն յաւուր պատշաճի «Ելոյթները», իր արժէքէն ոչի՛նչ կը կորսնցնէր:

Հատորը արժեւորած է Հայաստանի Ազգային Ակադեմիայի պատմութեան բաժանմունքի տնօրէն դոկտ. փրոֆ. Աշոտ Մելքոնեանի յառաջաբանը:

Պերճ Թերզեանի երկրորդ հատորն է «Յետադարձ Անդրադարձ»ը: Առաջինը արաբերէնով 2008-ին հրատարակուածն է «Արեւ» արաբերէն ամսօրեայ յաւելուածով լոյս տեսած առաջնորդող յօդուածներուն «Եգիպտական հայեացքներ պատմութեան, քաղաքականութեան եւ մշակութային ժառանգութեան մասին»:

Արաբերէնով թէ հայերէնով հրատարակուած հատորներով Պերճ Թերզեան իր մտաւորական եւ ազգային հայեացքներուն հաղորդակից կը դարձնէ հայ եւ արաբ ժողովուրդներն ու հանրային կարծիքը:

Պէլրուֆ

«Արարատ», 29 Դեկտեմբեր 2010



ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱԲԱՏԱՐԻՄ ԹԷՔԷԵԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԳԾԻՆ

Եգիպտահայ հասարակական գործիչ Պերճ Թերզեանն անձանօթ անուն չէ Սփիւռքի լայն տարածքի վրայ ու նաեւ Հայաստանում: Նրա բնաւորութեան եւ վարքագծի հանդարտաբարոյ հիմնարար գիծը փոխանցուել է նաեւ գրչին. պատմում է խաղաղ, բայց անառարկելի ոճով, նիրքի մէջ անգամ ներքին անհանգստութիւնը կամ անհամաձայնութիւնը քողարկում է անկողմնակալ, համակողմանի, նկարագրական մանրամասներով, ինչն աւելի վստահութիւն է հաղորդում խօսքի կշռին: Հեզահամբոյր վարքագծի ու համեստ խօսքի մէջ նման ինքնավստահութեան միաձոյլ խորք ուրիշ տեղ չեմ հանդիպել Սփիւռքի մտաւորականութեան շրջանում:

Տասնեակ տարիներ նրա ճանաչողական հետաքրքրութիւնները ողողել են երեք սրբութիւններ՝ հայրենիքը, եկեղեցին, դպրոցը: Վահան Թէքեանից ածանցուած Մշակութային Հայաստանի ուրուագծերի ջերմ պաշտպանն է մնացել. Հայաստան երկրի հանդէպ հնուց ի վեր ձգուող յարաճուն սեր՝ անկախ քաղաքական համակարգից, եկեղեցական միասնութեան վառ տեսիլ Ս. Էջմիածնի գերակայութեամբ, ազգային կրթական կայուն սկզբունքների առաջնայնութիւն:

Պ. Թերզեանի համար մամուլը, թերթը էական մի քանի գծերով տարբերուել են առաջին երեք աշխարհայեացքային ընկալումներից: Ազգային հաստատութիւն լինելուց առաջ «Արեւ» օրաթերթը նրա համար տարերք է, ինքնութեան դրսեւորման եւ հայապահպան առաքելութեան ամբիոն: Այստեղ անցած քառասուն տարիների ընթացքում նա ստուգել է փոփոխուող ընկերային արժէքների իրական գինը, գատել անցողիկը մնայուն, անժամանցելի խորհուրդներից, օրուայ հրամայականը զարգացման օրինաչափութիւններից:

Հիմա, երբ մեր առջեւ է Պերճ Թերզեանի հրապարակագրական «Յետադարձ անդրադարձ» ամփոփ ժողովածուն, որ նորերս լոյս է

տեսել Կահիրեում, կարելի է ընդգծել ամենից կենսականը. գիրքը վկայում է նաեւ այն փոփոխութիւնները, որոնք վերջին մի քանի տասնամեակներին ապրել է համայնքը, զլխաւորապէս ինքը՝ հեղինակը: Կեանքն է փոխուել: Երկի՛րն է փոխուել: Եւ ամենակարեւորը՝ Հայրենիքը մտել է զարգացման նոր, անծանօթ մայրուղի, որ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններում Վ. Թէքէեանի հիմնած գրեթէ հարիւրամեայ «Արեւ»ի պատուհանից մեզ է ներկայացնում Պ. Թէրզեանը՝ երբեմնի հարուստ առօրեայով յատկանշուած եգիպտահայ համայնքի արդար կենսագիրը: Ու թէեւ նուազել է եգիպտահայութեան դերակատարութիւնը Սփիւռքի միջօրեականներում, այնուհանդերձ Պ. Թէրզեանի եւ նրա նմանների շնորհիւ համայնքի ազգային-հոգեւոր շնչառութիւնը մնում է բարձր շերտերում:

Այսօր գրական հայ կեանք գրեթէ չկայ Կահիրեում, բայց ընկերային կեանքի ալիքուող յարաբերութիւններում, ընդհանուր տաղտուկի մէջ մամուլի բերած ազգային ոգեղինութիւնը ուրախացուցիչ լուր է, նշանակում է՝ կայ համընդհանուր աշխուժութիւն, իսկ Պ. Թէրզեանի նման փորձառու գործիչը գիտի կրակը թե՛ժ պահելու արուեստը, որ նրա այս գրքի երկրորդ բարձր առանձնայատկութիւնն է: Այստեղ նրա «բռնած» թիրախներն են կրթական, եկեղեցական, գաղափարական բանավիճային, պաշտպանիչ ենթաշերտերը ոչ միայն համայնքային, այլեւ Սփիւռքի հիմնահարցերի, տագնապների, աւելի լայն նշանառութեամբ՝ ինքնութեան փնտրտուքի յորձանոտում: Դա են վկայում ժողովածուում տեղ գտած յօդուածները, ելոյթները, հարցազրոյցները, վիճակագրական-վերլուծական ուսումնասիրութիւնը: Եգիպտահայ համայնքի նոր շրջանի տարեգիրը գաղութի վայրէջքների եւ վերելքի երկարատեւ զիգզագ շրջանի ականատեսն է:

Պերձ Թէրզեանը գրեթէ կէս դար ընկերային կեանքի պատնէշի վրայ է. անդամագրուել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեանը եւ խաղացել առանցքային դեր նրա Եգիպտոսի ենթաշրջանի կառավարման մէջ՝ զբաղեցնելով բազմաբնոյթ պաշտօններ՝ գանձապահից մինչեւ ատենապետ: «Արեւ»ը իր տունը եղած էր եւ է՝: Դեռ անցեալ դարի 60-ական թթ. վերջից օրաթերթի հրատարակչական մարմնի անդամ է, վերջին տասից աւելի տարիներին նրա արաբերէն ամսօրեայ յաւելումածի հայկական նիւթերի խորհրդատուն ու առաջնորդողների հեղինակը: Ի դէպ, դա հիմք դարձաւ, որ 2008 թ. լոյս ընծայի «Եգիպտահայ հայեացքներ պատմութեան, քաղաքականու-

թեան եւ մշակութային ժառանգութեան մասին» արաբերէն ծանրակշիռ հատորը, որի մէջ ընդգրկուել են 40 առաջնորդող յօդուածներ: Պ. Թէրզեանը գործուն մասնակցութիւն է ունեցել եգիպտահայ ուսումնական խորհրդի աշխատանքներին. պատահական չէ, որ գրախօսուող այս գրքում տարբեր տարիներին բարձրացուած կրթական խնդիրները չեն կորցրել նիւթի հրատապութիւնը, ընդ որում՝ ընդհանրական Սփիւռքի միւս օջախներում եւս:

Պ. Թէրզեանի հոգուն ու սրտին թանկ է անկախ Հայաստանի ուշադրութիւնը իր կատարած տեւական աշխատանքի ու նուիրումի դիմաց, աւելի ճիշդ՝ իր ուշադրութեան դիմաց տրուած գնահատականները. Երեւանի Մատենադարանը 1999-ն նրան շնորհել է վկայագիր եւ յուշամեդալ՝ գիտահրատարակչական աշխատանքներին աջակցութեան, իսկ ՀՀ Նախագահը 2007-ին՝ շնորհակալագիր՝ Կահիրէի մէջ Հայաստանի դեսպանատանը սատար կանգնելու համար:

Հայաստանի ուշադրութիւնը շարունակական է: Այդ է վկայում նաեւ «Անդրադարձների» առիթով ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի տնօրէն, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Աշոտ Մելքոնեանի շահեկան առաջաբանը, որ արժեւորում է սփիւռքահայ գործչի պատմական առողջ հայեացքը, յատկապէս ցեղասպանութեան գիտական խնդիրների քննութեան ուղղութիւնը՝ դասեր քաղելու եւ նորագոյն պայմաններում ազգային հաւաքական նոր կողմնորոշումների ընտրութեան մէջ: Հայրենի գիտնականի ուշադրութիւնից չի վրիպում նաեւ գաղութահայ դպրոցների հիմնախնդիրը:

Եւ եթէ կան հարցեր, որոնցում կարող ենք եւ չհամաձայնել հեղինակի հետ, նա խորհուրդ է տալիս չմոռանալ, որ գործ ունենք ընկերային հասարակաց կարծիքի հետ, որի շահերի արտայայտիչն է ինքը: Անտեսելու չէ, որ Պերճ Թէրզեանը յաւելեալ շնորհներից՝ «անտեղի պատիւներից» ձերբագատուելու ազնուութիւն է ցացաբերում, ինչը մարդկային էթիկայի հազուադէպ օրինակ է: Դա վերաբերում է մասնաւորապէս Գէորգ Զահուկեանի «Ստուգաբանական բառարանի» հրատարակութեան պատմութեանը, որտեղ իր դերի չափազանցուած գնահատութիւնից համեստօրէն հրաժարուելու քայլ է կատարել այս վերջին ամիսներին «Ազգ» թերթի էջերում:

Պ. Թէրզեանի յօդուածների զգալի մասը վերաբերում են անցեալ դարի 80-ական թթ.: Ինքը որոնում է «համազգային մտահոգութեան առարկայ եղող հարցեր», որոնք, միտքը ամբողջացնենք արդէն մենք,

բխել են եգիպտահայ գաղութին բնորոշ առանձնայատկություններից: Յիրաւի, դա այդպէս է, քանի որ հեղինակի նիւթերի ստուար մի բաժին հետաքրքրել են Սփիւռքի այլեւայլ պարբերականներին:

Շօշափուած խնդիրների մէջ Պերճ Թէրզեանը, որ քաջ գիտէր համայնքի եւ այլ օջախների կրթական տագնապները, ահագանգում է արեւմտահայերէնի համընդհանուր դարձած գահավէժ նահանջի մասին: Ակնարկ նետելով ստեղծուած համազգային անմխիթար կացութեան՝ նա արձանագրած է, թէ արեւմտահայերէնը «իրերու ներկայ վիճակով, դժբախտաբար հաստատ քայլերով կընթանայ դէպի անկացում»: Բոլորին քաջայայտ այս իրողութիւնը ստիպեց մտահոգ մտաւորականին քանիցս գտնուել Հայաստանի կրթական պատասխանատուների վերջին տարիներին կազմակերպած համաժողովներին եւ յանգել տրամաբանական եզրակացութեան, եթէ կ'ուզէք, բանաձեւումի, որը բխում է նաեւ մեր գործունէութեան շահագրգռութիւններից: Նա առաջարկում է ստեղծել Հայրենիքի եւ Սփիւռքի բոլոր ազդեցիկ կառոյցներից կազմուած միացեալ մարմին, մենք կ'ասէինք՝ յանձնաժողով, որի առաջին նպատակը հենց Հայաստանում արեւմտահայերէն դասաւանդող մասնագէտ ուսուցիչ պատրաստելու բարձրագոյն հիմնարկի կազմաւորումն է, «որ հետզհետէ զարգանալով վերածուի արեւմտահայերէնի մասնագէտ քատրերու կեդրոնի մը, թէ՛ մարդուժ պատրաստէ, եւ թէ՛ գրականութիւն մշակէ»: Ծրագիր, որի իրագործման տեսիլը տարիներ շարունակ եղել ու մնում է հայրենիքի Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի գործնական յանձնառութիւնը:

Այդպիսի ուղիների որոնման հանգրուան էր նաեւ Սփիւռքի նախարարութեան այս տարուայ ամառնային գիտաժողովը, որի լուծումները կարծես առաջիկայում կարող են տալ պտուղներ, որպէսզի Պերճ Թէրզեանի նման արեւմտահայերէնին տիրապետողներին մատների վրայ այլեւս չթունեն, որպէսզի Եգիպտոսի նման նահանջ ապրող երկրում ուսուցիչների պակասը ահագնացող չլինի այսօրուայ պէս:

Սա համայնքի յարատեւութեան նախապայմանն է: Սա Պերճ Թէրզեանի Երագն է, որն իրագործել, նշանակում է ապահովել արեւմտահայ ինքնութեան վաղուայ հեռանկարը: Ահա՛ Պերճ Թէրզեանի գլխաւոր պատգամը, որը կեանքի կոչելու ենք ազգովին:

Ուրիշ ճանապարհ, այլընտրանք չկայ: Այստեղից մեր հետեւութիւնը, գիրքը յետահայեաց անդրադարձ չէ: Նրա առաքելութիւնը վճռական քայլեր է պահանջում մեզանից:

Երեւան
«Սփիւոք» Գիտաուսումնական Կենտրոն

«Նոր Օր» շաբաթաթերթ, Լոս Անճելըս, 31 Դեկտեմբեր 2010



ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

«ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ»

ՅՕԴՈՒՄՆԵՐ, ԵԼՈՅԹՆԵՐ, ՀԱՐՅԱԶՐՈՅՑՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Արաբերեն գիրքով հանդես եկող Պերճ Թերզեանը, այս անգամ հրապարակ եկած է նոր հրատարակութեամբ մը՝ մայրենի լեզուով:

Հաւատա Լ, որ բարձրագոյն ուսումնէն առաջ այս մտաւորականը իր մայրենի լեզուն սորված է միայն հայկական նախակրթարանի մը մէջ ի Գահիրէ:

Այո, այդպէս էին մեր նախակրթարանները երէկ: Երէկ, հիմնական դասը մայրենի լեզուն էր: Հայերէնէն կտրուող աշակերտը պէտք է կրկնէր իր դասարանը:

Ահա թէ ինչպէս, յամառ կարդացող մը ըլլալով եւ տասնամեակներու ընթացքին Գահիրէի «Արեւ»ին կապուելով ու իր նախափորձերը հոն կատարելով, Թերզեանը հասած է իր անուան պէս Պերճ հայերէն մը օգտագործելու մակարդակին այս հատորին մէջ:

Կը կարդաք ու կը զարմանաք: Միաժամանակ կաճապարէք շնորհաւորել հեղինակը ոչ միայն իր մաքուր հայերէնին համար, այլ գիրքին ողջ բովանդակութեան, ուր կը պարագրուին ոչ միայն վերջին տասնամեակներու ողջ եգիպտահայ կեանքը, այլ նաեւ հայը յուզող բազմաբնոյթ հարցերը Հայրենիքին մէջ ու Սփիւռքի:

Պարզութիւնն ու անկեղծութիւնը հեղինակին գէնքերն են:

Երեւոյթները դատելու, մեկնաբանելու անկողմնակալ դիրքերը, կողմ ունենալով հանդերձ, կը մղեն ընթերցողը, որ 300 էջերու վրայ տարածուող այս հատորը կարդայ ուշադրութեամբ:

Այս էջերուն վրայ կը հանդիպինք քննադատութիւններու բայց ոչ խճրճանքի: Կը հանդիպինք տեսակէտներու, որոնք իրն են ու մերը կը դառնան, քանի որ հոն պարտադրանք չկայ:

Կը կարդանք ու հոն կը գտնենք ծանրաբարոյ մարդը, ինչպէս ինքն է, որ ոչ թէ կը ճառախօսէ փքուռոյց ոճով, այլ իր հայ մարդու խոհերը կը փոխանցէ ձեզի ու դուք ձեր դիմաց կը գտնէք արդարախօս մարդ մը, որ իր բջիջներուն բովանդակ գումարովը ոչ թէ փոթորիկներ կը ստեղծէ կողմերու միջեւ, այլ մաղմաղ անձրեւի նման կը տարածուի ազգային ու համազգային գործունէութիւններու դաշտերուն վրայ:

Կը կարդաք ու կը կարծէք, որ դուք կրնաք գրած ըլլալ այս գիրքը:

Հատորը նուիրուած է իր «Կեանքի անգուգական ընկերուհիին՝ Մեղային»: Եթէ կիներ հոգեւին կապուած չըլլայ մարդու մը, որ իր բոլոր օրերը նուիրած է ազգին անցնելով ժողովէ ժողով, այդ անձը ինչպէ՞ս կը դառնայ բոլորանուէր ազգային գործիչ, մանաւանդ երբ կիներ կը դառնայ գործակիցը իր ամուսնոյն:

Հատորը ունի իր յառաջաբանը, զոր ստորագրած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի տնօրէն՝ Փրոֆ. Աշոտ Մելքոնեանը, որ կը գրէ. «Լիայոյս ենք, որ շրջանառութեան է հանուում գիտաճանաչողական բնոյթի մի աշխատանք, որը մեծ հետաքրքրութիւն է առաջացնելու ինչպէս սփիւռքեան, այնպէս էլ հայաստանեան գիտաքաղաքական ու ընթերցող լայն հասարակայնութեան շրջանակներում եւ առաջիկայ տարիներին մղելու է զանազան գաղափարական կողմնորոշումներ ունեցող այլ գործիչների, որ իրենց տարիների քրտնաջան աշխատանքի արդիւնքը նման եղանակով հասցնեն հայ ընթերցողին»:

Վերջին տողը փրոֆեսորին մաղթանք մըն է, որուն կը միանանք ըսելու համար. Դժուար է, շատ դժուար՝ ըլլալ կողմ ու մնալ անկողմնակալ: Մաղթանքը ուժի մէջ է:

Հայ կեանքին մէջ ու եգիպտահայ կեանքին, չկայ նիւթ մը, զոր շօշափած չըլլայ Պերճ Թէրզեան, որ գիրքին մուտքի խօսքին մէջ համեստօրէն արձանագրած է. «Ներկայ հատորին մէջ տեղ գտած գրութիւնները պատմական նիւթերու հաւաքածոյ մը չեն: Անոնք տարիներու ընթացքին գրի առնուած անդրադարձներ են, որոնք առընչութիւն ունին 20-րդ դարու վերջին քառորդին եգիպտահայ գաղութին մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու կամ ընդհանրապէս համազգային մտահոգութեան առարկայ եղող հարցերու հետ»:

Այս հատորին մէջ կը գտնէք 66 յօդուած, ընդհանրապէս տպագրուած Գահիրէի «Արեւ» օրաթերթին մէջ, եօթ ելոյթ, չորս հարցազրոյց, մէկ ուսումնասիրութիւն եւ յաւելում մը՝ ուր հեղինակը կը պարզա-

բանէ առիթները կարգ մը յօդուածներու գրուելուն, թէեւ թափանցիկ էին գրուածները:

Աւելցնենք, որ հատորին ելեկտրոնային շարուածքն ու ձեւաւորումը գործն են յայտնի մտաւորական ու հեղինակ Դոկտ. Վաչէ Ղազարեանին, որ բծախնդիր մտաւորականի իր կեանքը նուիրած է հայ գիրին, լռութեան մը մէջ, հեռու խառնակիչ աղմուկներէ: Ապագային պիտի խօսին իր մասին:

Հատորին առաջին նիւթը Զաւէն Եպս. (ապա Արքեպս.) Չինչինեանն է, որ նորընտիր առաջնորդն է եգիպտահայոց, երբ այդ աթոռը թափուր էր երկար ժամանակ:

Գիտէք, որքան մելան կը հոսի նման ընտրութիւններու ժամանակ:

Ըսինք թէ չօշափուած նիւթ չկայ այս հատորին մէջ: Այո՛, Թերզեանը այստեղ բազմիցս կը խօսի հայ դպրոցի ու մայրենի լեզուի կարեւորութեան մասին: Լեզուն մեզ շաղկապեալ է. իսկ. «Մեր շուրջը հասակ նետող նոր սերունդը հայերէնի խօսակցական իր լեզուն խճողած է օտար բառերու այնպիսի բանակով մը, որ եթէ չըլլան բայերը խոնարհելու եւ բառերը հոլովելու հայկական ձեւերը, կրնաք դիւրութեամբ ունենալ այն տպաւորութիւնը, որ օտար լեզուով արտայայտուող խօսակիցներ են խօսողները, որոնք երբեմն հայերէն բառեր կը գործածեն»:

Հետաքրքրական է «Դրամին Շխշխկոցը» նիւթը, որ նկատի ունի այնպիսի մարդիկ, որոնք դրամի միջոցաւ կուզեն աթոռներ գրաւել եւ երբեմն ալ լսելի դարձնել դրամին շխշխկոցը միայն....:

Հեղինակը կը թելադրէ չմոռնալ հեռացած նուիրեալները, այս պարագային Տիգրան Պապիկեան տնօրէնը, որ իր կեանքը լրիւ նուիրած է հայ դպրոցին: Չենք գիտեր թէ տպուած են անոր յուշերը:

Պահել արժեչափերը: Չայդ կը թելադրէ հեղինակը, քանի որ. «Երբ գնահատանքը կը տրուի անժամանակ կերպով եւ անյարմար անձի, հանրային կարծիքը կ'ընդվզի ու կը դժգոհի»:

Աշխարհի այս մասին մէջ (Մերձաւոր Արեւելք) ապրող հայերս կարեւորելու ենք արաբերէն լեզուն եւ՝ ինչու ոչ՝ օգնելու արաբ այն հեղինակներուն, որոնք մեր ժողովուրդին պատմութիւնը գրի կ'առնեն հաւաստի աղբիւրներով:

Կազմակերպութիւններու մէջ «Որոշում Առնող Տարրը» որո՞նք են. «Շատերու կողմէ հայերէն քանի մը նախադասութիւն շարադասողը կը նկատուի մտաւորական, այնքան որ նօսր դարձած են մաքուր հայերէնով արտայայտուողներու շարքերը: Մտաւորականին եւ

մտաւորական հակումներ ունեցողին միջեւ շփոթութիւնը կը նմանի արուեստագէտը արուեստասէրին հետ շփոթելուն»:

Եւ, «ինծի ըսէ ո՛վ է գաղութիդ մէջ որոշում առնող տարրը, քեզի ըսեմ թէ ինչպիսի գաղութի մը մաս կը կազմես դուն»:

«Ապրիլ» - հարցը Յեղասպանութեան մասին է: Շատ անգամներ շեշտուած այս հատորին մէջ: Հեղինակը կը շեշտէ սերտացնել Սփիւռքի կապերը Հայրենիքին հետ, քանի որ. «Հայրենիքն է ապագայի միակ յուսալի կոտանը եւ յուսատու ապաւենը մեր»:

«Թրքական նենգութիւն», որուն դիմաց մենք պարտինք արաբներուն բացատրել մեր Յեղասպանութեան պատճառները իրենց իսկ լեզուով, արաբերէնով, մանաւանդ որ մինչեւ այսօր մեր տարած աշխատանքները այս ուղղութեամբ երբեք բաւարար չեն. ի մասնաւորի այսօր՝ երբ թուրքերը խուժած են արաբական աշխարհ, արաբներու հետ իրենց կրօնակից ըլլալը դրօշի վերածելով:

Նոր նիւթ մըն է ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց Պաշտպանութեան Յանձնախումբին մէջ թուրք Սոյսալին չընդունուիլը: Թուրքը մարդկային իրաւանց պաշտպան...:

Արաբական կարգ մը երկիրներու մէջ հայերը ունին ռատիօժամեր մեր լեզուով: Պաշտպանել, զօրացնել մեզի տրուած այս պատեհութիւնը: Այդ է հեղինակին ուզածը:

Ան դէմ է հայուն սնուիլովին: Բարեկամ մը իրեն ըսած է. «Սփիւռքը որքան տնտեսապէս յառաջդիմեց, նոյնքան ոգեպէս յետադիմեց»:

Անդրադարձում կայ բժիշկ Ռ. Ճեպէճեանի հրատարակած «Ո՛վ է Նա» գիրքին մասին:

Նաեւ խօսք Լոնտոնի «Մայնորիթի Ռայթց» (Փոքրամասնութեանց Իրաւունքներ) կազմակերպութեան հրատարակած «Հայերը» գիրքին մասին: Ի դէպ, մենք այդ գործը հայերէնի թարգմանելով հրատարակեցինք Հալէպի մէջ հեղինակներէն արտօնութիւն խնդրելով ու գոյացած գումարը այդ կազմակերպութեան դրկելով եւ մեր հաշույն հեղինակներն ալ Տէյվիտ Մարշալ Լէնկ եւ Քրիստոֆըր Ուոքըր, տասական օր Հալէպ հրաւիրելով:

Մեզի համար կարեւոր են օտարներու վկայութիւնները, այդ է որ կը շեշտէ Պերճ Թէրզեան:

Հեղինակը կը շեշտէ մեր միասնականութիւնը իրատեսօրէն ըսելով. «Հետաքրքրուող սերունդ մը կրնայ գոյութիւն առնել ՄԻԱՅՆ մեր վարժարաններուն մէջ ջամբուելիք հայեցի եւ ամբողջական դաս-

տիարակութեամբ մը (եւ միաժամանակ) - եթէ ժողովուրդ մը կ'ուզէ իր նպատակներուն հասնիլ, պարտի հրաժարիլ արթուն երազելէ եւ պատշաճիլ հանգրուանային պայմաններու պարտադրանքին»:

Ոչ միայն պահել, այլ բազմացնել հայութեան թիւը, որ չիրակահանար Հայաստանը պարպելով, ինչ որ թուրքին ուզածն է:

Շիտակ խօսք անուղիղ գործի մը մասին: Նիւթը հայ եկեղեցիին երկփեղկումն է:

Հայ մամուլ, ընթերցողներու սակաւացում իր ու բոլորիս ցաւերէն մէկը: «Անկախաբար Հայրենիքին ունենալիք դերէն, Սփիւռքը սուր կարիքը ունի ներքին միասնականութեան եւ ուժերու ամբողջական լարումի՝ հաւաքաբար պայքարելու համար իր գոյութեան սպառնացող վտանգներուն դէմ»:

Այլ կարելոր նիւթ՝ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը: Ու տակաւին ունենալ մեր նոր սերունդը ազգային ոգիով դաստիարակելու ուղեգիծ մը:

Հապա Երուսաղէմի տագնա՞պը: Տագնապ պատրիարքարանի մէջ ինչպէս երէկ, նոյնպէս այսօր, երբ վտանգի մէջ են հոն գտնուող մեր հսկայ հարստութիւնները՝ հողատարածք, ձեռագիրներ եւ մասամբ նորին:

«Առողջ Ազգային Քաղաքականութեան Թելադրանքը» յօդուածը կ'եզրակացնէ.

- Մեր կռուանը մեր Հայրենիքն է ինչ վարչակարգի մէջ ալ գտնուի: Անշուշտ նաեւ Սփիւռքի կազմակերպեալ աշխատանքը:

Երբ Թուրքիան Պուլկարիոյ թուրք փոքրամասնութիւնը կը պաշտպանէ, արդեօք կը մտածէ թէ ինք ինչպէ՞ս կը պաշտպանէ իր բռնագրաւած երկրին փոքրամասնութիւնները - ցեղասպանութեան ենթարկելով՝ վ - հայը, յոյնը, ասորին, ալեւին, քիւրտը, քիլտանին, սուրիանին, համշէնցիները: Ցեղասպանը փոքրամասնութիւններու պաշտպա՞ն... այ քեզ նորութիւն...:

Այսօր ալ սպիտակ ջարդին դիմաց. «Մեր միակ սփոփանքը զոր ունինք մեր Հայրենիքի ամրակոտ իրականութիւնն է»:

Էդիկ Յովհաննէսեանով չենք կրնար առաջնորդուիլ: Անոր ելոյթները (որոնցմէ մէկը՝ մեր միակ թշնամին Սովետն է, մենք գիտէինք, որ թուրքն է), միասնութեան տանելու տեղ՝ բաժանումի կ'առաջնորդեն...:

Իր նիւթն է նաեւ «Արեւ» օրաթերթին անկաշառ հայրենասիրութիւնը:

«Մարդկային Ողբերգություն»ը կը տառապեցնէ զինք.- Ափրիկէի տարածքին անօթութենէ մահացած են 34 միլիոն մարդիկ, մինչ 1985-ին զինամթերքի համար աշխարհ ծախսած է ինը հարիւր միլիաո տոլար...:

«Երկու Պատրիարք Հակոտնէայ Վարք ու Բարք» յօդուածը նկատի ունի Պոլսոյ շնորհալի Շնորհք պատրիարքը եւ Երուսաղէմի.. պատրիարքը..., երկրորդը պատիժի արժանի:

Մեր կուսակցութիւնները որոշ հարցերու մէջ համամիտ չեն իրարու, համամիտ չըլլալը կոչել թշնամի - սխալ հասկացողութիւն:

Եթէ ճանչնանք, լաւ ճանչնանք Հայաստանը, անշուշտ նոյնպէս Սփիւռքը, կը դառնանք առարկայական ու գիտակից հայրենասէրներ: Այդ է ճիշդ ուղին:

Մեր միակ ուղին, փրկութեան ուղին՝ մեր սեփական ուժին մէջն է: Նոյնը վաղուց ձեւակերպած է Եղիշէ Չարենց հեռատես Բանաստեղծը:

Մեր գաղութներէն եւ Հայրենիքէն մեկնող իւրաքանչիւր անհատ ցաւ կը պատճառէ մեզի. այդ համայն հայութեան ցաւն է:

Ուրիշ հարց մըն ալ, հանգուցեալ հայ մեծերու աճիւնները հայրենիք փոխադրել օր մը. Եգիպտոսէն՝ Սիրանոյշ, Օտեան, Արփիարեան, Թէքէեան, Թաշճեան, Սարուխան...:

Պրիսթլի մէջ կառուցուած հայկական եկեղեցին եւս հեղինակին նիւթն է, ուր իրենց պաշտամունքը կրնան ընել նաեւ հայ աւետարանականներն ու հայ կաթողիկէները՝ քանի հայ առաքելական եկեղեցիին դուռը բաց է «իւր գաւիթովն հիւրընկալ»:

Հեղինակը տեղ-տեղ, զուսպ բայց լաւ պատկերներով կ'արտայայտուի:

Պահել արժանապատուութիւնը, հեռու մնալ շողոքորթելու ախտէն: Այդ է Պերճ Թէրզեանին ուզածը:

Լիսքսոքի մէջ «Այտա» օփերայի երգչուհին հայուհի մըն է ծնած Լիբանան: Անակնկալ այս հանդիպումը տրուած է յուզումով ու պատշաճօրէն:

»Զրոյց Օդին Մէջ» օտար մը ինչ կ'արտայայտուի մեր դատին մասին եւ հեղինակը ի՛նչ լրջութեամբ եւ փաստացի տուեալներ կը ներկայացնէ անոր:

Իսկ հայկական ինքնութեան պաշտպանումը զօրակցիլ կը նշանակէ Հայ Դատի պաշտպանութեան:

«Արթօ Պլըքտանեանին Շքանշանները» - գնահատել՝ գնահատել գիտցողները:

Որքան յուզիչ են հեղինակին այցելությունը Տեր Զօր եւ իր խօսքերը ազգային անբարբառ գործիչ Օննիկ Ալեքսանեանի մասին: Արդար եւ իրաւ:

Պերճ Թերզեանին ելոյթները թիւով եօթը, պարագայական խօսքեր չեն, թէւ պարագայ կը ներկայացնեն. նոյնպէս չորս հարցազրոյցները որոնցմէ սորվելիք ունինք, ուսումնասիրութիւնը, որ եզիպտահայ վարժարանները նկատի ունի, հաշուական տուեալներով, մեր բոլոր վարժարանները յիշել կու տայ: Իսկ յաւելուածը, ոչ միայն աւելորդ չէ այլ կը հաստատէ Թերզեանին անկեղծութիւնը:

Մէկ խօսքով Պերճ Թերզեան հայուն ցաւերովը ճենճերող հոգի մըն է, որ ելք մը կը փնտռէ որպէս բալասան հայուն կոտտացող վերքերուն:

Ողջունելի գործ մը արդարեւ:

Հալէպ

«Զարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 23 Մարտ 2011



ԵՐՈՒԱՆԻ ԱՁԱՏԵԱՆ

ՏԱԳՆԱՊՈՂ ՀԱՅՈՒՆ ՄԱՏԵԱՆԸ՝

«ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ»

Եղեռնը արինաձիր քարտէս մը գծեց երկրագունդի տարածքին, եւ ցրօնքի հալածական զանգուածները լերդացած արեան ուղիներով հաւաքական կեանքի գոյակցութիւններ ստեղծեցին ամէնուր՝ վերապրելու անկոտրում հաւատքով մը լի: Պերճ Թերզեանի հեղինակած հատորը հոգեբանական այդ քարտիսագրութեան մէկ ցոլացումն է, աւելի՝ թանձրացեալ հանգանակը անոր:

Բոլոր անոնք որ կը ճանչնան այս գիրքին հեղինակը, վստահաբար գիտակից են, թէ ան անձնապէս գոհունակ կեանք մը ապրելու բազում տուեալները ունի: Սակայն, ան իր անձին մէջէն կապրի այդ անձէն դուրս, իր վրայ կրելով հաւաքականութեան մը խնդիրները, ցաւերը, նկրտումներն ու երազները, որոնք կու գան խռովել զինք ու մղել այն տագնապին, որ ծնունդ տուած է այս հատորին:

Այս հատորի ծածկին ներքեւ համախմբուած յօդուածները, ուսումնասիրութիւնները, հարցազրոյցներն ու ակնարկները մէյ մէկ գունագեղ քարեր են, յաճախ գորշ երանգներով, որոնք ի մի գալով կը կերտեն հեղինակին դիմագիծը՝ մոզայիքի մը համադրութեան մէջ:

Հատորը ամբողջ մտաւորական ճիգի մը արդիւնքն է, սակայն տեսական անիրապաշտ բնոյթ մը չունի ան, այլ ամէն հարցի, ամէն խնդրի եւ ամէն տագնապի փորձնական ու փորձարարական ենթախորքի մը վերարկուած արտայայտութիւնն է: Այսինքն, հեղինակը բազմակողմանի կերպով մխրձուած ըլլալով հայ կեանքի մէջ, առօրեայ փորձի, կեանքն ու երեւոյթները վերափոխելու ազնիւ ճիգէն քամուած եզրայանգումներ սահմանած ու քանդակած է այս հատորին մէջ: Հետեւաբար իւրաքանչիւր միտք, իւրաքանչիւր թելադրութիւն եւ իւրաքանչիւր վրդովում պաշտպանուած է գործնական ենթախորքի մը բարիքով: Թէեւ կարգ մը հարցերու եւ նիւթերու կիզակէտը կը

հանդիսանայ եգիպտահայ գաղութը՝ եզրակացութիւնները կը զգենուն համազգային եւ ընդհանրական բնոյթ:

Հատորին մէջ տեղ գտած նիւթերը բազմաթիւ են եւ բազմաբնոյթ, սակայն, անոնք միայն երեսակներն են այն հիմնահարցերուն, որոնք մղձաւանջային սաստկութեամբ մը կը խռովեն հեղինակին սիրտն ու միտքը - հայրենիքը՝ իր ցաւերով ու երազներով, Հայաստանեայց Եկեղեցին՝ իր կենսական նշանակութեամբ եւ բաժանման բեկումով, հայոց ցեղասպանութիւնը, իր պատմակահ խորքով եւ համաշխարհայնացնելու հրամայականներով, իրարու ագուցուած հայ լեզուն եւ հայ դպրոցը՝ իրենց նահանջով, մարտահրաւերներով, կարելիութիւններով ու վրիպումներով:

Այս բոլոր հարցերը քննարկուած են սրտցաւ լրջութեամբ եւ թուղթին վրայ սեւեռուած առանց սեթեւեթի, յաճախ իմաստուն խտացումներու դասեր քաղելով եւ արձանագրելով հատորին մէջ: Օրինակ, ան կը գրէ.- «Ամէն հաւաքականութիւն, որ ունի խորարմատ աւանդութիւններով եւ սովորութիւններով նուիրագործուած արժեչափեր, որքան հաւատարիմ մնայ անոնց՝ այնքանով կրնայ բարձր պահել իր բարոյական, հոգեկան ու մտային արժեքները»:

Հեղինակին գլխաւոր մտահոգութիւնը եղած է ամէն հարցի մէջ փնտռել այդ արժեչափերը, որոնք յաճախ կը պակսին, եւ այդ արժեչափերու չգոյութեան պարագային չապաւինիի ամօթխածութեան, իր իմացած արժեչափերը թելադրելու եւ ի հարկին՝ կիրարկելու: Այդ պատճառաւ ալ Պերճ Թերզեան ազգային գործիչը, խոհուն եւ իմացապաշտ մտաւորականը եւ անյաւակնոտ ղեկավարը կը գործէ ու կը տնօրինէ ըստ իր դատողութեան՝ առանց հաւանութիւն, ծափ, գնահատանք կամ շքանշան ակնկալելու: Եթէ հարց տրուի, թէ Պերճ Թերզեան եգիպտահայ գաղութի ամէնէն ժողովրդական ղեկավարն է՝ պատասխանը, հաւանաբար միանշանակ չէ. բայց եթէ հարց տրուի, թէ ան գաղութի ամէնէն իմաստուն անձն է՝ այդ մասին ոչ մէկ տարակարծութիւն: Այդ պատճառով ան կրնայ մխիթարուիլ պատմական կարգ մը նախընթացներով երբ կոթողային փիլիսոփայ մը եւ մարդկային հզօրագոյն բարեկարգիչը՝ Սոկրատ եւ Քրիստոս հասարակութեան կողմէ մահապատիժի ենթարկուեցան, համեմատաբար աւելի ժամանակակից տեսանողները կրնան իրենց համոզումներուն կառչած մնալ: Աներկբայօրէն ժողովրդավարութիւնն ու հաւաքական իմաստութիւնը միշտ չէ, որ կը համընկնին, աւելի յաճախ՝ նոյնիսկ կը

հակադրուին իրարու:

Գիրքին հիմնական թեմաներէն մէկը Հայ Դատն է, որ տրուած է իր բազմաթիւ երեսներով ու պատմական խորքով: Սակայն, այս կապակցութեամբ ունի նաեւ օգտապաշտ ու գործնապաշտ բնագոյ մըն ալ՝ բացի այն տեսականէն, որ ուրուագծուած է այս հատորին մէջ: Հայ Դատի ակնարկներն ու տեսութիւնները կերպով մը սառցալեռան (այսպէրկ) գագաթն են միայն, որովհետեւ հեղինակը Հայ Դատի ճշմարիտ զինուորն է, որ այդ դատը պաշտպանած է եւ կը պաշտպանէ. բան մը՝ որ չենք ըներ յաճախ Հայ Դատին համար: Ան երգիծական շեշտով մը կը բնութագրէ եգիպտահայ գաղութէն ներս տիրող թմրութիւնը Հայ Դատի հետապնդման կապակցութեամբ, սակայն, ծանօթ ըլլալով գաղութահայ համայն կեանքին՝ անարդար պիտի չըլլայ ընդհանրացնել երեւոյթը.- «Մեր գաղութն ալ, իր կարգին, կատարեց ազգային նեղ շրջանակի մէջ իր յուշահանդէսը, հոգեհանգիստը եւ... հոգեճաշը. այդքան: Մեր Դատին ու անոր վերաբարձման ի նպաստ տարուող աշխատանքը, եթէ գոյութիւն ունի, կրնայ կրկին ձմեռնաքունի մէջ մտնել մինչեւ 1985-ի Փետրուարը կամ Մարտը, երբ յանկարծ մեր միտքը իյնայ, որ Եղեռնի 70-ամեակն է եւ պէտք է բան մը ընել»:

Հայ Դատի վերլուծումները շարունակելէ առաջ, թող ներուի շեղում մը՝ հեղինակին կարելոր յատկանիշներէն մէկը բնութագրելու. աստիկա՝ զուարթախոհութիւնն է, երգիծանքը, հիւմորը, որ միայն այս էջին վրայ չէ, որ կը դրսեւորուի, այլ հիւսուած է գիրքի ամբողջ շարուածքին մէջ, կայծակնային շողարձակումներով կենդանացնելու երեւոյթներն ու դատումները եւ աւելի խորքային կերպով դրոշմելու սահմանումները ընթերցողի միտքին մէջ: Ծիծաղը եւ երգիծանքը ընթերցողը զուարճացնելէ եւ նիւթերը հեզնելէ աւելի՝ իմաստութեան կայծակումներ են եւ յաճախ կը բխին շատ տխուր եւ անհեթեթ իրավիճակներէ: Հետեւաբար, զարմանալի չէ, որ մեր մեծագոյն երգիծաբանը՝ Յակոբ Պարոնեան նկատուած է իր ժամանակի ամենատխուր մարդը:

Հետեւաբար զուարթախոհութիւնն ու երգիծանքը այս հատորին ամենէն երջանիկ երեւոյթներու շարքին պէտք է դասել:

Թերզեան գիտակից է Հայ Դատի դիմաց ծառացող մարտահրաւերներուն, որովհետեւ ան Գերսամ Ահարոնեանի «Մեծ Երազի ճամբուն» իրապաշտ ուղեւորներէն մէկն է ու կը խորհրդածէ, որոշ տարակոյտով մըն ալ.- «Սակայն դեռ երկար է, շատ երկար է, Հայ Դատի ճամբան, եւ չենք գիտեր, թէ ներկայ միջոցներով քանի սերունդէն

պիտի կարենանք հասնիլ մեր նպատակներուն, այն ալ եթէ յաջողինք իբրեւ հայ գոյատեւել»:

Ուրիշ տեղ մը ան վճռական շեշտով մը կը հաստատէ.- «Նոյնիսկ թուրքին հետ ունեցած մեր թշնամութիւնը վերջ պէտք է գտնէ այն պահուն՝ երբ տիրանանք մեր արդար իրաւունքներուն»:

Հայ Դատի քաղաքական տուեալներու մասին գրելու պահուն, բոլոր հարցերը եւ իրողութիւնները կը ներկայացուին համապարփակ կերպով: Այդ իմաստով՝ Խորհրդային տարիներուն ոմանց համար խոհեմութիւն չէր ապաւինիլ այդ հզօր կայսրութեան ուժին, իսկ ոմանց համար ալ՝ պարզ թշնամանքի առարկայ կրնար դառնալ ան: Պերճ Թերզեան դեռեւս 1984-ին գրուած իր յօդուածներով այդ գործօնը կը բնութագրէ յիարժէք կերպով եւ իր հաստատումները կը մնան այսօր իսկ ի գօրու՝ Խորհրդային Միութեան փլուզումէն քսան տարիներ ետք: Այսպէս՝ ան կը գրէ.- «Իսկ թուրքին դէմ առանձին եւ իր բախտին ձգուած Հայաստանի մը մասին խօսիլը անհեթեթութիւն է, որովհետեւ, այդ պարագային, ոչ միայն չենք կրնար մեր հողերը ետ առնել թուրքէն, այլեւ կրնանք գտնուիլ նոր եւ արմատաջինջ եղեռնի մը սպառնալիքին առջեւ, որ կրնայ սրբել-տանիլ մեր դարաւոր հայրենիքին վերջին մնացորդացը»:

Հայ Դատը տեսութիւն մը ըլլալէ աւելի՝ գործնական մարտահրաւեր մը հանդիսացած է Պերճ Թերզեանին համար, որուն ներդրումը նշանակալից է այդ ուղղութեամբ: Հայ Դատի իր վերլուծումներուն մէջ ան լայն բացած է իր հորիզոնը, որովհետեւ այդ դատը, մեր կամքէն անկախ, զգեցած է նաեւ միջազգային տարողութիւն: Մինչ մենք մեր կողմէ հազիւ թէ կը սթափինք ոգեկոչում մը կատարելու եւ գաղութը զօրաշարժի ենթարկելու՝ անդին թշնամին արթուն է եւ իր նիւթական անսահման միջոցներով կը ձգտի միջազգային հանրային կարծիքը ապակողմնորոշելու իր ժխտումի յերիւրանքին ի նպաստ: Արդարեւ, երբ ան կը տեղեկանայ, թէ թրքական ձայնասփիւռը ամէն կիրակի արաբերէն լեզուով հաղորդումներ կը սփռէ՝ խեղաթիւրելով ցեղասպանութեան պատմութիւնը, Թերզեան կանցնի գործի եւ իր հետագօտութիւններով կը հաստատէ, թէ այդ հաղորդումներէն անկախ, արաբերէն լեզուով բազմաթիւ հատորներ հրատարակուած են Հայ Դատի դէմ. եւ սահմոկած՝ ան կը գրէ.- «Նման երեւոյթ մը պէտք է մեզ ահաբեկէ, քանի որ մօտ եօթանասուն կամ աւելի տարիներ զանազան արաբական երկիրներու մէջ ապրելէ ետք, երբ յետադարձ ակնարկ մը

նետենք, կը տեսնենք, թէ գրեթէ ոչինչ ըրած ենք մեր արդար դատը արաբ ժողովուրդին մօտէն ծանօթացնելու ուղղութեամբ»:

Թերզեան այս «սահաբեկումը» կը վերածէ գործնական աշխատանքի՝ սատարելով դատաւոր Ֆուատ Հասան Հաֆէզի՝ արաբերէնով գրուած «Հայ ժողովուրդի Պատմութիւն»ի հրատարակութիւնը յաջողցնելու եւ ձեռնարկելով արաբերէնով «Արեւ»ի ամսական յաւելումաւ հրատարակութեան, համայն արաբական աշխարհի մէջ սփռելով Հայ Դատի վերաբերեալ առողջ տուեալներ՝ կարելոր չափով իր գրիչէն ելած յօդուածներով, եւ ապա՝ քառասնեակ մը հայանպաստ իր յօդուածներէն կազմելով արաբերէն հատոր մը:

Ուրիշ կարելոր թեմա մըն է հայ դպրոցը, իբրեւ ամբողջ հայ լեզուի պահպանութեան ու տարածման: Հայ լեզուի եւ յատկապէս արեւմտահայերէնի ապագային պահպանութեան ուղիով իր ծաւալած գործերը իրենց արձագանգը գտած են այս հատորին մէջ:

Ազգապահպանման ամենէն կենսական գործօններն են հայ դպրոցը, հայ գիրքը, մասնաւորաբար՝ դասագիրքը եւ հայ լեզուն, բոլորը իրարմով զօրացող եւ իրար ամբողջացնող: Այս բոլորը իրենց տեղը գտած են Պերճ Թերզեանի մտահոգութեանց մատեանին մէջ, սրտցաւ քննարկումներով, խոր վերլուծութեամբ եւ մանաւանդ գործնական առաջարկներով: Վերլուծումները, ինչպէս եւ գործնական գաղափարներն ու ծրագիրները արտայայտութիւնն են այն փորձառութեան, զոր հեղինակը ձեռք ձգած է այդ ծիրէն ներս իր կատարած աշխատանքներով: Դպրոցը ոչ մէկ հայկական հաստատութեան կը նմանի: Մեր շատ մը եկեղեցիները եւ եկեղեցականները իրենց առաքելութիւնը ի կատար ածուած կը համարեն կիրակնօրեայ պատարագով ու քարոզով: Մամուլը, ընդհանրապէս, շաբաթական յայտնութեամբ, միութիւնները՝ պարբերական հանդէսներով ու ճաշկերոյթներով: Բնականաբար բոլոր կազմակերպութիւններն ալ կենսական գործօններ են ազգապահպանման: Հայ դպրոցը ամենօրեայ պատարագում մըն է, կը կարօտի ծրագրումի, ամենօրեայ կազմակերպչական աշխատանքի, կրթական գիտութեան (որովհետեւ դպրոց վարել ու կրթական ծրագիրը մշակելը մասնագիտութիւն են) ու մանաւանդ տեսիլքի ու հաւատքի: Առանց հաւատքի կարելի չէ վարել հայ կրթական գործ: Հայ դպրոցը իր էութեամբ եւ առաքելութեամբ չի կրնար ինքնաբաւ ըլլալ: Դպրոց պահելը արտակարգօրէն դժուար նախաձեռնութիւն մըն է: Կրթական գործը եւ դպրոցը իրենց ճակատագրին թողուլը, առանց այլ

աղբիւրներէ անոնց ծախսերը հոգալու, սպասելով որ դպրոցը ինքնին ինքնաբաւ ըլլայ՝ պարզապէս դասալքութիւն է մեր գոյամարտի ուղիին վրայ: Թերզեան հայ կրթական կեանքի տեսանողներէն է, որ ճանչնալով գործին անկարելի պայմանները՝ յանձնառու եղած է կրթական կեանք ու դպրոց ղեկավարելու, դասագիրք ապահովելու եւ ուսուցիչ պատրաստելու, լեզուն պաշտպանելու եւ մանաւանդ՝ արեւմտահայ լեզուին մթազնոդ ճակատագրին դէմ մարտնչելու: Ան շատ դիպուկ կերպով կը բնութագրէ կրթական գործին էութիւնը, գրելով.- «Մեր ճառերուն մէջ կը սիրենք յաւակնիլ, թէ մեր իտէալներուն իրագործման համար պատրաստ ենք զոհուելու եւ արին թափելու: Կրթական գործին պարագային, մեզմէ պահանջուածը արին թափել չէ, այլ՝ արին փրկել, մեր նոր սերունդին առողջ եւ հայեցի դաստիարակութիւնը ապահովելով»:

Եգիպտահայ վարժարաններու մասին իր պատրաստած վիճակագրութիւնը հայ կրթական գործին ամբողջական առաքելութեան հաւատացող գործնապաշտ առաքելի մը ձեռակերտն է:

Շահեկան, ուսանելի եւ սրտցաւ են իր ընդհանրացումներն ու դատումները՝ հայ մարդ կերտելու գործօնին սահմանուած հայ դպրոցին, հայկական կրթութեան եւ անոնց նկատմամբ մեր ունեցած վերաբերումին մասին երբ ան կը գրէ.- «Մեր ցաւը այն է, որ մեր ազգային զգացողութիւնը այնքան մը բթացած է, որ հարկ եղած լրջութեամբ չենք մտահոգուած հայ վարժարանին գոյութեան իմաստը արդարացնող Հայ Մարդ պատրաստելու էական առաջադրութեամբ»:

Նոյն նկատողութեան եզրակացութիւնը.- «Այնքան ատեն, որ մենք շարունակենք գերին մնալ երեւոյթներուն, առանց կարելորութիւն տալու հարցերու էութեան, չգարմանանք, որ մեր վարժարաններուն շրջանաւարտները երեւոյթով հայ ըլլան եւ ոչ թէ էութեամբ»:

Հակառակ հայ կեանքի տխուր երեւոյթներուն եւ սփիւռքահայ կեանքի մթազնոդ ապագային, որոնց հոգերուն կրողն է հեղինակը, իր հայաբաբախ սիրտը երբեմն բանաստեղծական թռիչքներ կը սահմանէ իր գրիչին՝ արձանագրելու համար այսպիսի տողեր.- «Ծիծեռնակաբերդի բարձունքը յառաջիկայ տարուան Օգոստոսին պիտի դառնայ հայութեան տարասփիւռ զաւակներուն արուեստի բազինը եւ տաղանդի կիզակէտը»:

Այս հատորի ծածկին տակ հաւաքուած քրոնիկները գրուած են օրը օրին եւ մեծաւ մասամբ հրատարակուած են Գահիրէի «Արեւ»

օրաթերթին մէջ, բայց իրենց ընդգրկումով ու խորքային վերլուծումով վեր կը բարձրանան ու կը տարածուին ժամանակի վրայ, միշտ պահելով իրենց այժմեականութիւնն ու թարմութիւնը: Այդ իմաստով Թերզեանի խստաբիբ քննութեան առարկայ դարձած է Հայաստան-եայց Եկեղեցւոյ երկփեղկումը Էջմիածին-Անթիլիաս հակամարտութեան առնչութիւններով, ինչպէս նաեւ Երուսաղէմի պատրիարքութեան տնտեսական տագնապը:

Եկեղեցւոյ միասնականութեան հարցը պարզ կարգախօս մը չէ հեղինակին համար, այլ՝ Սփիւռքի վերապրումի կենսական ազդակներէն մէկը: Ան բազմաթիւ էջեր յատկացուցած է եկեղեցւոյ միասնականութեան, բարեկարգութեան եւ նուիրապետական կառոյցին մասին: Եւ ան բարեկիրթ կերպով, կատարած է իր դատումները՝ առանց բառերը ծամծմելու, խիզախ բնութագրումներով:

Այս բնագաւառէն ներս Թերզեանի ախտանշումներէն մէկը հետեւեալն է.՝ «Մեր ժամանակներուն մէջ Հայ եկեղեցւոյ տագնապին գլխաւոր առանցքը կը շարունակէ մնալ Անթիլիասի Աթոռը, քանի որ անոր միջոցաւ Հայ եկեղեցւոյ երկփեղկումը կը տարածուի եւ կ'արմատանայ արտասահմանի շատ մը գաղութներէն ներս»:

Ուրիշ տեղ մը աւելի պատկերաւոր ձեւով կը ներկայացնէ ան այս ազգային ցաւը, գրելով.՝ «Սփիւռքը հայրենիքէն պաղեցնելու եւ մեր նուիրապետական աթոռներէն մէկը կամ միւսը Ս. Էջմիածնէն հեռացնելու որեւէ ճիգ կը նմանի ծառի մը ճիւղերը իրենց բունէն անջատելու աշխատանքին»:

Երկարատեւ ի վեր սեղանի վրայ է Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը եւ մանաւանդ՝ նոր ժամանակներու ոգիի համապատասխանող կանոնագրութեան մը որդեգրումը: Տագնապն ու բաժանումը սնունդ կառնեն այսպիսի կարգապահութեան մը պակասէն, որոնք իրենց հերթին կը սատարեն միեւնոյն անմխիթար վիճակի գոյատեւման: Թերզեան, իր մատը վերքին վրայ դնելով, այս հարցին մասին սրտցաւօրէն իտեալապաշտ մատնանշում կը կատարէ, հետեւեալ հաստատումով.՝ «Արդարեւ այնքանատեւ, որ Կիլիկեան Աթոռի դիրքորոշումը Մայր Աթոռին հանդէպ չէ վերադարձած 1956էն առաջ գոյութիւն ունեցող բնականոն վիճակին, դժուար թէ կարելի ըլլայ հասնիլ օգտակար լուծումներու՝ մանաւանդ ինչ կը վերաբերի եկեղեցւոյ ընդհանուր կանոնագրութեան հարցին»:

Այս հատորը հայ կեանքի բազմաթիւ հարցերուն կանդրադառնայ

լուրջ եւ հիմնական վերլուծումներով: Սակայն, դժուար եւ նոյնիսկ անկարելի է մի առ մի քննել զանոնք այստեղ: Միայն կայ մէկ կարեւոր նիւթ, որ կարելի չէ զանց առնել: Ատիկա Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն է՝ իր ծննդավայր Գահիրէի մէջ: Չխոստովանուած ու չյայտարարուած ընդհանուր համոզումը այն է, թէ Եգիպտոսի մէջ Պերճ Թերզեան Բարեգործականն է եւ Բարեգործականը՝ Պերճ Թերզեանը:

Եգիպտահայ գաղութին նօսրացումով՝ բոլոր հարցերը, հրամայականները եւ կազմակերպութիւնները ստացան մակերեսային բնոյթ: Սակայն, Բարեգործականը դարձաւ գաղութին ամէնէն հարուստ կազմակերպութիւններէն մէկը, եթէ ոչ ամէնէն հարուստը, շնորհիւ բարերարութիւնի Սաթենիկ Չագըրբի կողմէ Միութեան եղած հսկայ նուիրատուութեան: Ստեղծուած հարստութեան չափ ստեղծուեցան օրինական ինդիւիդներ, հաշուական եւ մատակարարական մարտահրաւերներ: Երբ կուգենք անդրադառնալ նման նախընթացքներու, մեր առջեւ կը պարզուի երբեմնի հնդկահայ գաղութի պարագան, որուն հարստութիւնները համարեալ ի չիք եղան մարդու պակասի հետեւանքով: Եգիպտոսի պարագային՝ նախախնամութիւնը իր դերը կատարած եղաւ հարցերու կիզակետին վրայ դնելով Պերճ Թերզեանը, որ քանի մը համախորհուրդ նուիրեալներու հետ ստանձնեց մարտահրաւերը պատմական այս անակնկալ իրադարձութիւնը վերածելու ազգային բարիքի՝ ձեռնհասօրէն հետապնդելով կալուածական, օրինական, մատակարարական բոլոր գործերը, այդ ամբողջ հարստութիւնը տարածելով համայն գաղութի կարիքներուն վրայ: Շնորհիւ այդ բանիմաց գործունէութեանց, Հայաստանի նորանկախ պետութիւնը եւս ունեցաւ իր ամէնէն շքեղ դեսպանատուներէն մէկը, երբ Բարեգործականը անոր տրամադրութեան ներքեւ դրաւ հանգուցեալ ճանիկ եւ Սաթենիկ Չագըրեաններու ապարանքը:

Գործնական այս բոլոր իրագործումներուն կարգին՝ Պերճ Թերզեան նաեւ ամէնէն պերճախօս գաղափարախօսներէն մէկն է Բարեգործականին: Միութեան հիմնադրութեան հարիւրամեակին առիթով անոր խօսած ճառը պարզապէս պատմական կշիռ ունեցող էլոյթ մըն է՝ վայել Միութեան եռամեծար նախագահներուն: Արդարեւ, միայն Պօղոս Նուպար մը, Կիւլպէնկեան մը կամ Ալեք Մանուկեան մը կրնային այնքան արտայայտիչ ու բազմաբովանդակ կերպով ներկայացնել Միութեան մէկ դարու գործն ու գաղափարախօսութիւնը, միեւնոյն

մակարդակի վճիտ լեզուի ու ոճի յարակցութեամբ:

Պերճ Թերզեանի լեզուն զուլալ է ու խիտ, ոճը սահուն, միտքերը՝ կայծկլտուն եւ այդ պատճառաւ ալ սեւեռուած հարցերը կը ներկայացունին խորութեամբ եւ անմոռանալի բնութագրումներով: Փորձիչ է անդրադառնալ կարճ յօդուածի մը՝ «Խաղաղութիւն եւ համերաշխութիւն» վերնագրին տակ, որ երեք էջերու մէջ կը քննէ մեր ազգային կեանքին մէջ համատարած ախտ մը՝ «զէշ մարդ» չըլլալու բարդոյթը, զոհելով ազգային շահերը: Կը գրէ ան.- «Ամէն ոք եւ մասնաւորաբար կարգ մը մարդիկ կաշխատին «զէշ մարդ չըլլալ»: Անհատական կամ բարեկամական հանդիպումներու առիթով ձեզի սրտցաւորէն կը խօսին, թէ ինչ պէտք է ընել... Բայց ոչ: Այս տիպի մարդոց համար նախընտրելի է խաղաղութեան սիրոյն զոհել գաղութին շահերը եւ գաղութը «խաղաղօրէն» եւ «համերաշխօրէն» առաջնորդել դէպի ամբողջական անդամալուծում»:

Պերճ Թերզեանի «Յետադարձ Անդրադարձ» հատորը մատեան մըն է ազգային ցաւերու, հայութեան գոյապայքարի, տխուր մատնանշումներու, սակայն, պայծառ առաջադրութեանց եւ անխարդախ եւ վճիտ ազգասիրութեան: Իր մատնանշումները տեղին են, նշդրակը՝ հատու բայց ելքի որոնումներով, անկոտրում ու ճակատագրապաշտ:

Հատորին ընթերցումը աւարտելէ առաջ, եթէ կուզէք բնութագրել Պերճ Թերզեան մարդն ու գործը՝ կարիք չունիք հեռունները երթալու: Կը բաւէ կատարել իրմէ հետեւեալ մէջբերումը.- «Հանրային ծառայութեան նուիրուած անձը, մանաւանդ երբ կը գտնուի առաջնորդի եւ ղեկավարի դիրքին վրայ, պէտք է գիտակցի իր ուսերուն վրայ դրուած պատասխանատուութիւններուն, անսայ խղճի ձայնին ու չխուսափի բարդ կացութիւններ դիմագրաւելէ՝ ժողովրդականութիւն կորսնցնելու վախէն տարուելով»:

Տիթորոյիթ

«Կամար» պարբերաթերթ, Պէյրութ, թիւ 13, (Մայիս) 2011



المحرر : بيرج ترزيان

الكتاب : تأملات استعادية - مقالات نقدية

الناشر : المحرر

الطبعة : الأولى ٢٠١١

المطبعة : المطبعة الافريقية ش.م.م

رقم الايداع : ٢٠١١/١٤٦٥٣

الترقيم الدولي : 6- 229- 716- 977- 978

RETROSPECTIVE REFLECTIONS Reviews

Cairo – 2011

